



ԵԱՀԿ Եվրոպայում անվտանգության և
համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ



Հայաստանի
ՔՀԿ-ների
Հակակոռուպցիոն
կոալիցիա



Ծրագիրը
ֆինանսավորվում է
Եվրոպական միության
կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվում
է
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի
կողմից

Իրականացնող՝
Իրավաբանների հայկական
ասոցիացիա

Իրականացնող՝
Հայաստանի ՔՀԿ-
ների
հակակոռուպցիոն
կոալիցիա

Գործընկեր՝
Ինֆորմացիայի
ազատության
կենտրոն

**ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՄԱՑՄԱՆ ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔՀԿ-ՆԵՐԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈԱԼԻՑԻԱ՝ Ի ԴԵՄՍ «ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ**

**ՀՀ արդարադատության նախարարի հունվարի 22-ի թիվ 18-Ա հրամանով ստեղծված
Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ
վերլուծությունն իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խումբ**

ԵՐԵՎԱՆ,
Հունիս 2016թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	4
ՀՀ կառավարության ընդունած 2014-2017թթ ծրագիր.....	6
ՀՀ կառավարության ընդունած 2015-2018թթ հակակոռուպցիոն ռազմավարությունը	6
ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիր.....	12
Ներկայիս իրավիճակը	12
ԳԼՈՒԽ Ի. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՓՈՐՁ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ	16
1. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՈՒՄՆ ԱՊՀ ԵՐԿՆԵՐՈՒՄ	16
1.1 Ուկրաինայի Հանրապետություն.....	16
1.2 Մոլդովայի Հանրապետություն	20
1.3 Վրաստանի Հանրապետություն	22
1.4 Լատվիայի Հանրապետություն	22
1.5 Լիտվայի Հանրապետություն	22
1.6 Էստոնիայի Հանրապետություն.....	24
2.ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՈՒՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ	24
2.1 Մակեդոնիայի Հանրապետություն	24
2.2 Ռումինիայի Հանրապետություն.....	27
2.3 Սլովակիայի Հանրապետություն	29
3.ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՈՒՄԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅՈՒՄ	32
3.1 Արգենտինայի Հանրապետություն.....	32
3.2 Բրազիլիայի Հանրապետություն	34
3.3 Պերուի Հանրապետություն	35
3.4 Չիլիի Հանրապետություն	36
3.5 Պանամայի Հանրապետություն	37
3.6 ԱՄՆ և Կանադա	38
4. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՈՒՄՆ ԱՍԻԱՅՈՒՄ	38
4.1 Չինաստանի Հանրապետություն.....	38
4.2 Ինդոնեզիայի Հանրապետություն	40
4.3 Ճապոնիայի Հանրապետություն	42
4.4 Մալազիա.....	42
4.7 Լիբանան.....	43
5. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՈՒՄՆ ՕԿԿԻԱՆԻԱՅՈՒՄ.....	45
5.1 Նոր Չեյանդիա.....	45
5.1 Ավստրալիա	46

6. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍԱՑՈՒՄՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ	46
6.1 Բոտսվանայի Հանրապետություն	46
6.2 Եգիպտոսի Հանրապետություն	48
ԳԼՈՒԽ II. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑԿՈՂ ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ	49
Հայտարարագրման օրենսդրական հիմքեր. Նախապատմություն	49
Առկա խնդիրներ	51
ԳԼՈՒԽ Ս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿՈՂ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ	61
1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	61
2. ՀՆԱՐԱԿՈՐ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	63
2.1 ԱՆՍԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱԿԱՐԿԱԾ	63
2.2 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՐՑ	65
2.3. ԼՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԵՄ ՑՈՒՑՍՈՒՆՔ ՉՏԱԼՈՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ	65
2.4 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐ	67
2.5 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	69
2.6 ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿՈՒՆՔ	71
3. ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	71
Օգտագործված գրականության ցանկ	78
Հավելված	80

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետությունն իր անկախության վերջին երկու տասնամյակների ընթացքում միացել է մի շարք միջազգային իրավական փաստաթղթերի և ստանձնել այդ փաստաթղթերով ամրագրված պարտավորությունների կատարումը:

Կոռուպցիայի դեմ պայքարում միջազգային առաջադեմ իրավական քաղաքակրթությունը մշակել է միջազգային իրավական փաստաթղթեր, որոնք սահմանում են կոռուպցիայի դեմ պայքարում արդյունավետ պայքարի միասնական կանոններ:

Այդպիսի փաստաթղթերից է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի կողմից 2003 թվականի հոկտեմբերի 31-ին Նյու Յորքում ընդունված Կոռուպցիայի դեմ կոնվենցիան¹: Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցան դեռևս 2005 թվականի մայիսի 19-ին, իսկ վավերացրել այն 2007 թվականի մարտի 8-ին:

Այդ Կոնվենցիայի նպատակներն են.

ա) կոռուպցիան կանխարգելելուն և դրա դեմ ավելի արդյունավետ եւ ներգործուն պայքարելուն ուղղված միջոցների խրախուսումը և ուժեղացումը.

բ) կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարում, այդ թվում՝ արժեքների վերադարձման ուղղությամբ միջազգային համագործակցության և տեխնիկական օգնության խրախուսումը, դյուրացումը և օժանդակումը.

գ) պետական գործերի և պետական սեփականության ազնիվ, պատասխանատու և պատշաճ կառավարման խրախուսումը:

Կոնվենցիան այդ նպատակների իրագործման ուղղությամբ սահմանում է այն առաջնահերթ միջոցառումները, որոնք պետք է նախաձեռնվեն կոնվենցիային միացող պետությունների կողմից, միննույն ժամանակ՝ ներառությունում նշելով, որ այդպիսի համապարփակ և համակողմանի մոտեցումն անհրաժեշտ է կոռուպցիայի արդյունավետ կանխարգելման եւ դրա դեմ պայքարի համար:

¹ Տե՛ս http://www.un.am/res/UN%20Treaties/XI_9.pdf

Այդպիսի միջոցառումներից է Կոնվենցիայի 20-րդ հոդվածի ներքո ամրագրված ապօրինի հարստացման քրեականացումը: Այսպես, այդ հոդվածում նշվում է.

«Իր սահմանադրությունը և իր իրավական համակարգի հիմնարար սկզբունքները պահպանելու պայմանով՝ յուրաքանչյուր Մասնակից պետություն պետք է քննարկի այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ որպես քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»:

Հարկ է նշել, որ ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ապօրինի հարստացումը սահմանող միակ միջազգային իրավական ակտը չէ²: Մասնավորապես, «Կոռուպցիայի կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» Աֆրիկական միության կոնվենցիայի (ընդունված՝ 2003թ.-ին) 4(1)(g) հոդվածը ապօրինի հարստացումը համարում է «կոռուպցիոն գործողություն» եւ «հանցագործություն», իսկ ապօրինի հարստացման սահմանումը ըստ հոդված 1(1)-ի հետեւյալն է.

«Ապօրինի հարստացումը պաշտոնատար կամ ցանկացած այլ անձի ակտիվների նշանակալից ավելացումն է, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել»:

Նույնաբովանդակ իրավական դրույթ է ամրագրված նաև 1996 թվականի մարտի 29-ին ընդունված «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» միջամերիկյան կոնվենցիայի 9-րդ հոդվածում, որը նույնպես քրեականացնում է ապօրինի հարստացումը³: Այդ կոնվենցիան ստորագրել և վավերացրել են ավելի քանի երկու տասնյակ պետություններ⁴:

Ինչպես վերը նշվեց, Հայաստանի Հանրապետությունը ներկայումս միացել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային, սակայն մինչ օրս ներպետական օրենսդրությամբ քրեականացված չէ ապօրինի հարստացումը:

² Տե՛ս «Ապօրինի հարստացման քրեականացման միջազգային փորձը և Հայաստանում ապօրինի հարստացումը քրեականացնելու հնարավորությունները» վերլուծություն <http://iravaban.net/wp-content/uploads/2014/12/Illicit-enrichment-arm.pdf>

³ Տե՛ս <https://www.oas.org/juridico/english/treaties/b-58.html>

⁴ Տե՛ս <https://www.oas.org/juridico/english/Sigs/b-58.html>

ՀՀ կառավարության ընդունած 2014-2017թթ ծրագիրը

2014թ.-ի մայիսի 22-ին ՀՀ Ազգային Ժողովը հաստատեց Հայաստանի Հանրապետության Կառավարության Ծրագիրը 2014-2017թթ-ի համար: Ծրագրի 2.3 բաժնում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության և արդարադատության արդյունավետ համակարգը» վերտառությամբ, 44-45 էջերում ներկայացված է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից իրականացվելիք հակակոռուպցիոն քաղաքականությունը, որը պետք է հիմնված լինի կոռուպցիայի դեմ պայքարի նոր վերախմաստավորված տեսլականի վրա: Գաղտնիք չէ, որ ապօրինի հարստացման քրեականցումը հանդիսանում է կոռուպցիայի դեմ պայքարի անկյունաքարային միջոցներից մեկը, որի վերաբերյալ ծրագրում անդրադարձ է կատարվել հետևյալ կերպ.

«Կմշակվեն և կներդրվեն «չհիմնավորված հարստացման», շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև էթիկայի կանոններով սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն կառուցակարգեր»⁵:

«Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը պարտավոր կլինի հայտարարագրերի չներկայացման, վարքագծի կանոնադրքերի պահանջների՝ ներառյալ շահերի բախման կանոնների, «չհիմնավորված հարստացման» դեպքերի, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմիններ»⁶:

ՀՀ կառավարության ընդունած 2015-2018թթ հակակոռուպցիոն ռազմավարությունը⁷

Այդ ռազմավարության «Կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանում և արդյունավետ քննություն» վերտառությամբ 2.2 կետի համաձայն՝

⁵ Տե՛ս Կառավարության Ծրագիրը 2014-2017թթ-ի համար, էջ 44

⁶ Տե՛ս Կառավարության Ծրագիրը 2014-2017թթ-ի համար, էջ 45

⁷ Տե՛ս ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիր, կառավարության 2015 թվականի N 1141 որոշում
http://gov.am/u_files/file/xorhurdner/korupcia/1141_1k_voroshum.pdf

1. Հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական միջոցներից մեկը կոռուպցիոն վարքագծի համար պատասխանատվության համարժեք միջոցներ սահմանելն է և նման վարքագծի դրսևորումներն արդյունավետ քննելը: Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ ՔՕ-ը սահմանում է մեկ տասնյակից ավելի կոռուպցիոն հանցագործություններ, սակայն դա լիարժեք չի արտացոլում կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների ծավալը և բովանդակությունը: Միաժամանակ, ՀՀ-ում կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության համակարգ չի գործում: Չկան պաշտոնատար անձանց կարգապահական կամ վարչական պատասխանատվության ենթարկելու գործուն կառուցակարգեր, ճշգրիտ որոշված չէ կոռուպցիոն հանցանքների շրջանակը, իսկ այդ հանցանքների քննությունն իրականացնող մարմինների անկախության, մասնագիտացվածության և փոխգործակցության պահանջները միշտ չէ, որ պահպանվում են:
2. Այս առումով, անհրաժեշտություն է առաջանում կոռուպցիոն բնույթի իրավախախտումների համար պաշտոնատար անձանց պատասխանատվության գործուն համակարգ ներդնելու, ինչպես նաև շարունակաբար կատարելագործելու կոռուպցիոն դրսևորումների համար կարգապահական, վարչական և քրեական պատասխանատվության միջոցները: Վերոնշյալի իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները.
 - 1) Մատչելի և կանխատեսելի ձևակերպել կոռուպցիոն իրավախախտումների համար պատասխանատվություն նախատեսող դրույթները.
 - 2) Իրականացնել ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծության.
 - 3) Խստացնել կոռուպցիոն հանցանքների համար սահմանված պատիժները, երկարաձգել դրանց համար նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետները.
 - 4) Կատարելագործել կոռուպցիոն վարքագծի հետևանքով պատճառված վնասի հատուցման մեխանիզմները:
3. Հակակոռուպցիոն ռազմավարության կարևորագույն քայլերից է կոռուպցիոն բնույթի իրավախախտումների արդյունավետ քննության իրականացումը, ինչը

դեռևս շարունակում է մնալ ցածր մակարդակի վրա: ՀՀ-ում կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ գործերով նախաքննությունն իրականացնում են տարբեր քննչական մարմիններ, ինչն ինքնին դրական ազդեցություն չի ունենում քննչական գործունեության արդյունավետության վրա: Անհրաժեշտություն է առաջանում գործարկելու կոռուպցիոն բնույթի իրավախախտումների քննության արդյունավետությունն ապահովող կառուցակարգեր:

4. Նման կառուցակարգերը գործարկելուն ուղղված միջոցառումներն են.

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին վերապահել լիազորություն՝ վարքագծի կանոնադրքերի պահանջների, ներառյալ շահերի բախման կանոնների, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների խախտում թույլ տված հանրային ծառայողների և պաշտոնատար անձանց նկատմամբ իրավական ներգործության միջոցներ կիրառելու առաջարկություններ ներկայացնել իրավասու անձանց կամ մարմիններին կամ ինքնուրույն կիրառել պատասխանատվության միջոցներ.

- 1) Մշակել կոռուպցիոն հանցանքների շրջանակը որոշելու պատշաճ մեթոդաբանություն և օրենքով սահմանել դրանց սպառիչ ցանկը.
- 2) Հստակ տարանջատել կոռուպցիոն քրեական գործեր քննող նախաքննական մարմինների ենթակայությունը՝ հաշվի առնելով ինչպես այդ հանցանքների բնույթը, այնպես էլ դրանց կատարման մեջ մեղադրվող անձանց առանձնահատկությունները.
- 3) Ապահովել, որպեսզի կոռուպցիոն հանցանքները քննեն նախաքննական մարմինների մասնագիտացված ստորաբաժանումները, իսկ այդ գործերով նախաքննության օրինականության նկատմամբ հսկողությունը և հետազայում մեղադրանքի պաշտպանությունն իրականացնեն բացառապես այդ գործերով մասնագիտացած դատախազները.
- 4) Կոռուպցիոն բնույթի իրավախախտումները բացահայտելիս, ինչպես նաև դրանց կապակցությամբ քրեական վարույթ իրականացնելիս ուժեղացնել օպերատիվ-հետախուզական գործունեություն, նախաքննություն և դրանց նկատմամբ հսկողություն իրականացնող մարմինների միջև համագործակցությունը.
- 5) Մշակել կոռուպցիոն հանցագործությունների քննության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման՝ գիտականորեն հիմնավորված և միասնական մեթոդիկա, այն է՝ որոշակի սկզբունքների և չափորոշիչների

ամբողջություն, որը հնարավորություն կտա իրավակիրառողին համակողմանիորեն բացահայտել կոռուպցիոն հանցագործության բոլոր փաստական հանգամանքները, անկախ դրա տեսակից, բնույթից և այն կատարած անձից:

Միննույն ռազմավարության «Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորում» վերտառությամբ 2.1.1. կետի համաձայն՝ կոռուպցիայի կանխարգելման տեսանկյունից կարևորվում է օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորումը⁸: Այս առումով, առաջնային նախապայման է հանդիսանում հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց օրինավոր և բարեխիղճ վարքագիծն ապահովող ինստիտուցիոնալ համակարգի ձևավորումը:

Վերջինիս իրականացմանն ուղղված միջոցառումներն ընդգրկում են՝

- 1) ԵՄ և ՏՀԶԿ հանրային ծառայողների կամ պաշտոնատար անձանց համար կիրառվող էթիկայի կանոնների հիմնարար սկզբունքներին համապատասխան «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով, անհրաժեշտության դեպքում՝ ճյուղային օրենքներով էթիկայի սկզբունքների և վարքագծի կանոնների սահմանելը.
- 2) հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներ (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) ձևավորելը, դրանց ձևավորման և գործունեության նորմեր սահմանելը, պատշաճ գործունեությունն ապահովելը, ինչպես նաև վերջիններիս համար իրենց գործունեության վերաբերյալ համակարգող մարմին և հանրությանը հաշվետվություն ներկայացնելու վերաբերյալ պարտականություն սահմանելը,
- 3) հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ) գործունեության համակարգման մարմին նշանակելը: Տվյալ

⁸ Տե՛ս ՀՀ կառավարության կողմից ընդունված 2015-2018թթ հակակոռուպցիոն ռազմավարություն, կետ 2.1.1

մարմինը վերջիններիս կտրամադրի մեթոդական ուղեցույցներ և կապահովի դրանց վերապատրաստման, մոնիթորինգի և գնահատման արդյունավետությունը:

- 4) յուրաքանչյուր պետական մարմնում հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակների (էթիկայի հանձնաժողովներ կամ էթիկայի հարցերով պատասխանատուներ), անձնակազմի կառավարման ստորաբաժանումների և հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման համար պատասխանատուների միջև համագործակցության գործուն մեխանիզմներ ներդնելը,
- 5) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին հանրային ծառայության առանձին ոլորտներում վարքագծի կանոնների պահպանման պրակտիկան ուսումնասիրելու, վերլուծելու և ամփոփելու համարժեք գործիքներ տրամադրելը և ռեսուրսներով համալրելը.
- 6) վարքագծի կանոնների պահանջների իրական կատարումը, ներառյալ՝ այդ պահանջներին չենթարկվելու համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի մշակումն ու ներդնումը.
- 7) էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտման գործառնությունների վերապահումը.
- 8) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ձևավորման և անդամների ընտրության գործընթացի վերանայման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովին ռեսուրսներով համալրումը.
- 9) «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանրային ծառայողի և պաշտոնատար անձի անհամատեղելի գործունեության ու այլ սահմանափակումների շրջանակի վերանայումը, դրանց հստակության և կանխատեսելիության ապահովումը:

Բացի այդ, ըստ ռազմավարության՝ օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման կարևոր նախապայմաններից մեկը շահերի բախումը

կանխարգելող գործնականորեն կիրառելի կառուցակարգերի ձևավորումն է, որի իրականացման նպատակով անհրաժեշտ է կատարել հետևյալ միջոցառումները.

- 1) հանրային ծառայողի և պաշտոնատար անձի շահերի բախման հասկացության և իրավիճակների սահմանումը, շահերի հայտարարագրման մեխանիզմների սահմանումն ու կատարելագործումը, այդ թվում՝ բարձր ռիսկային ոլորտներում, ինչպես նաև այն պետական պաշտոնյաների համար, ովքեր չունեն վերադաս.
- 2) հանրային ծառայության առանձին ոլորտներում շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտման, ինչպես նաև դրանց չեզոքացման գործառույթների վերապահումը էթիկայի հարցերով պահանջների պահպանման նկատմամբ վերահսկողություն և հսկողություն իրականացնող օղակներին.
- 3) շահերի բախման, անհամատեղելի գործունեության և այլ սահմանափակումների բացահայտումն ու չեզոքացումը, ինչպես նաև սահմանված պահանջների խախտման համար ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերի մշակումն ու ներդնումը:

Օրինավոր և բարեխիղճ հանրային ծառայողների դասի ձևավորման հաջորդ կարևոր նախադրյալը հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավումն է: Վերջինիս իրականացմանն ուղղված միջոցառումներն ընդգրկում են՝

- 1) ակտիվների ու շահերի հայտարարագրման գործընթացի վերանայումն ու օպտիմալացումն՝ ընդլայնելով հայտարարագրման ենթակա տվյալների ցանկը և հայտարարագրի ներկայացնող պաշտոնատար անձանց շրջանակը, որոշակիացնելով փոխկապակցված անձանց և իքի կազմին վերաբերող տվյալների շրջանակը, հստակեցնելով հայտարարագրման կարգը և ժամկետները.
- 2) հայտարարագրման գործընթացի կանոնների կատարման մշակումն ու ներդնումը՝ ներառյալ այդ կանոնների պահանջները չկատարելու համար

իրավական ներգործության միջոցների կիրառումն ապահովող գործուն ընթացակարգերը.

- 3) հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացումը՝ «Հանրային ծառայության մասին»⁹ ՀՀ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:

ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիր

Այդ ծրագրի 47-րդ կետի համաձայն նախատեսված միջոցառումներից է ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծության իրականացումը, նշված է, որ ներկայացվել է առաջակություն ապօրինի հարստացման համար քրեական կամ վարչական պատասխանատվություն սահմանելու նպատակահարմարության վերաբերյալ

Այդ ծրագրի 16-րդ կետի համաձայն նախատեսված միջոցառումներից է հանրային ծառայողների ու պաշտոնատար անձանց ակտիվների ու շահերի հայտարարագրման (ֆինանսական բացահայտման) համակարգի բարելավումը, իսկ 17-րդ կետի համաձայն նախատեսված միջոցառումներից է հայտարարագրման գործընթացի թափանցիկության ու մատչելիության բարձրացումը՝ օրենքում ամրագրելով ստուգված հայտարարագրերի վերաբերյալ հրապարակային պարզաբանումներ կամ բացատրություններ ներկայացնելու ընթացակարգերը:

Ներկայիս իրավիճակը

Նորանկախ Հանրապետության քրեական օրենսգիրքն ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, իսկ ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ից, և «ապօրինի հարստացումը» որպես քրեորեն պատժելի արարք, չի նախատեսում¹⁰:

⁹ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունված է 2011 թվականի մայիսի 26-ին)

¹⁰ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Քրեական Օրենսգիրք ՀՕ-528 օրենք, ընդունված՝ 2003թ. Ապրիլի 18-ին

ՀՀ Նախագահի «ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարության ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» Թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ սկիզբ դրված բարեփոխումների շրջանակներում ներկայումս մշակվում է նոր քրեական օրենսգիրքը:

Նոր քրեական օրենսգրքի հայեցակարգն արդեն մշակված է և դրված շրջանառության մեջ¹¹: Նոր քրեական օրենսգրքի հայեցակարգի 2.8-րդ կետի համաձայն նախատեսված է. «Անհրաժեշտ է իրականացնել քրեականացում և ապաքրեականացում (...) Քրեականացումը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով. միջազգային պարտավորություններ, գլոբալ գործընթացներ, գիտատեխնիկական առաջընթաց (մասնավորապես՝ կիրառական գաղափարներ, գենետիկայի, բժշկագիտության բնագավառում ներկայումս տարածում ստացող հանրավտանգ արարքներ և այլն)»:

Ելնելով հայեցակարգային այդ դրույթից, կարծում ենք, որ արդեն իսկ հրամայական է դարձել կատարելու ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունը՝ քրեական օրենսգրքում ամրագրելով ապօրինի հարստացման հանցակազմը:

Հանրային քննարկման նպատակով շրջանառության մեջ դրված նոր քրեական օրենսգրքի նախագծի 410-րդ հոդվածում նախատեսված է ապօրինի հարստացման հանցակազմը, որը ձևակերպված է հետևյալ կերպ.

«1. Ապօրինի հարստանալը՝ պաշտոնատար անձի եկամտի կամ գույքի չափի էական աճը կամ պաշտոնատար անձի կողմից էական ծախսերի կատարումը, որը չի հիմնավորվում նրա իրավաչափ եկամտով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով»:

Նոր քրեական օրենսգրքի նախագծում տրված ապօրինի հարստացման հանցակազմը մեր համոզմամբ ունի հետևյալ խնդրահարույց հարցերը.

¹¹ Տե՛ս http://www.justice.am/storage/files/legal_acts/legal_acts_0871859725811__..._.pdf

ա) «չի հիմնավորվում» եզրաբանությունը չի համապատասխանում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածում տրված ձևակերպմանը: Քանի որ ըստ կոնվենցիայի՝ ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների բացակայության ապացուցման բեռը պետք է դրվի այդ հանցակազմի սուբյեկտի, այլ ոչ թե քրեական հետապնդման մարմնի վրա: Սույն վերլուծության շրջանակներում կժխտվի այն փաստարկը, թե կոնվենցիոն ձևակերպումը հակասում է անմեղության կանխավարկածի սկզբունքին:

բ) բացակայում է որևէ նշում պաշտոնատար անձի կողմից ներկայացվող գույքի և եկամուտների հայտարարագիրը կեղծ կամ թերի ներկայացնելու դեպքում քրեական պատասխանատվություն սահմանելու մասին: Սույն վերլուծության 2-րդ գլխում ներկայացված միջազգային փորձը վկայում է այն մասին, որ ժայդպիսի դրույթն ուղղակի անհրաժեշտ նախապայման է ապօրինի հարստացման հանցակազմի արդյունավետ կիրառումն ապահովելու համար: Հակառակ պարագայում, այն վերածվելու է «մեռած նորմի», որը չի կիրառվելու պրակտիկայում, քանի որ հնարավորություն չի լինելու վերլուծել անձի կողմից ներկայացված հայտարարագրերը:

գ) բացակայում է որևէ նշում պաշտոնատար անձի ապօրինի հարստությունը նրա հետ փոխկապակցված անձանց վերագրելու դեպքում քրեական պատասխանատվության մասին: Արդյունքում, պաշտոնատար անձը կարող է խուսափել ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվությունից իր ձեռք բերված եկամուտները որպես փոխկապակցված անձանց ունեցվածք հայտարարագրելով (նույնիսկ այն դեպքում, երբ այդ փոխկապակցված անձինք չեն աշխատում):

դ) ապօրինի հարստացման հանցակազմի սանկցիայում բացակայում է գույքի բռնագրավում պատժատեսակը: Նոր քրեական օրենսգրքի նախագծում ամրագրված պատժի համակարգից պարզ է դառնում, որ գույքի բռնագրավումն այլևս համարվում է ոչ թե պատժատեսակ, այլ անվտանգության միջոց և կրում է առավելապես կանխարգելիչ բնույթ: Սույն վերլուծության 2-րդ գլխում ներկայացված միջազգային փորձը վկայում է այն մասին, որ ապօրինի հարստացման հանցակազմի դեպքում պարտադիր է ապօրինի ձեռք բերված եկամուտների բռնագրավումը հանցանք կատարած անձից:

Բացի այդ, Եվրոպական միության և այլ երկրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սովորաբար կիրառվում են կանխիկ դրամի շրջանառության սահմանափակումներ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար, ոչ միայն՝

հանրային ծառայողների: Առավելագույն շեմի հետ կապված սահմանափակումները կարող են տարբերվել, սակայն սովորաբար 3000 եվրոյից պակաս են: Օր՝ Ֆրանսիա՝ մինչև 1000 եվրո, Իտալիա և Բելգիա՝ մինչև 2.999 եվրո, Լիտվան և Ռումինիան պատրաստվում են շեմ դարձնել 2900 եվրոն: Գերմանիան նույնպես պատրաստվում է նախատեսել սահմանափակումներ: Ռուսաստանը նույնպես քննարկում է որպես սահմանը նախատեսել 300.000 ՌԴ ռուբլին:

Եվրոպական կենտրոնական բանկը հաստատել է, որ սահմանափակումները համատեղելի են ԵՄ իրավունքի հետ, և հղում է կատարել Խորհրդի համար 974/983 կանոնակարգի 19-րդ կետին, որում նշվում է, որ «թղթադրամների և մետաղադրամների տեսքով վճարումների սահմանափակումները, որոնք սահմանված են անդամ պետությունների կողմից հանրային պատճառներով, չեն կարգավիճակի հետ անհամատեղելի չեն եվրոյի թղթադրամների և մետաղադրամների տեսքով իրավական տենդերների կարգավիճակի հետ, պայմանով, որ դրամական պարտքերի կարգավորման օրենքով չարգելված այլ միջոցները հասանելի են:

Սույն վերլուծությունը հիմնված է միջազգային փորձի եւ կոռուպցիայի դեմ պայքարի միջազգային եւ ներպետական իրավական փաստաթղթերի ուսումնասիրության վրա եւ ընդգրկում է հետեւյալ հարցերի պատասխանները.

- Ինչպե՞ս է մեկնաբանվում եւ կիրառվում ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածը արտասահմանյան երկրներում,
- Ինչպե՞ս է քրեականացվել ապօրինի հարստացումը արտասահմանյան երկրներում եւ ինչպիսի՞ պատժամիջոցներ են նախատեսվել դրա համար:
- Ի՞նչ ինստիտուցիոնալ միջոցառումներ են կիրառվել արտասահմանյան երկրների ապօրինի հարստացումը քրեականացնելու նպատակով:
- Ինչպիսի՞ լուծումներ կարող են կիրառվել մեր օրենսդրությունում, այդ թվում նոր քրեական օրենսգրքի նախագծում՝ ապօրինի հարստացման հանցակազմը կատարելագործելու նպատակով:

Վերլուծությունը ներկայացնում է նաեւ միջազգային փորձից քաղված դասերը, ինչպես նաեւ համապատասխան առաջարկություններ՝ Հայաստանում ապօրինի հարստացումը քրեականացնելու կարելիության եւ անհրաժեշտ միջոցառումների իրականացման վերաբերյալ:

ԵՐԿՐՆԵՐԻ

1. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄՆ ԱՊՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

1.1 Ուկրաինայի Հանրապետություն

Ուկրաինայի Հանրապետությունը ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային միացել է 2003 թվականի դեկտեմբերի 11–ին, իսկ վավերացրել այն 2009 թվականի դեկտեմբերի 2–ին:

Ուկրաինայի Հանրապետությունում 2013–2015թթ–ին բազմաթիվ քննարկումների արդյունքում քրեական օրենսգիրքը համապատասխանեցվեց միջազգային չափանիշներին: Այս ուղղությամբ հատկապես կարևորվում է «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքը, որն ընդունվել է 2014 թվականի հոկտեմբերի 14–ին և ուժի մեջ մտել 2015 թվականի ապրիլի 26–ին¹²:

Բոլոր կոռուպցիոն բնույթի հանցանքները և նրանց բաղկացուցիչ տարրերը քրեականացված են, այդ թվում ապօրինի հարստացման հանցակազմը: Այդ բարեփոխումների արդյունքում Ուկրաինայում հստակեցվել է նաև կոռուպցիոն հանցագործությունների ցանկը:

2015 թվականի փետրվարի 15–ին ընդունված թիվ 1660–d օրինագծով Ուկրաինայի քրեական օրենսգրքի 368.2 հոդվածում ապօրինի հարստացման միջազգային սահմանմանը համապատասխան ամրագրվեց այդ հանցակազմը, այնուամենայնիվ մնացին չլուծված խնդիրներ:

Մինչ այդ հանցակազմի բովանդակությունը ներկայացնել, նշենք, որ ապօրինի հարստացման հանցակազմը որպես այդպիսին Ուկրաինայի քրեական օրենսդրությունում ինկորպորացվել է դեռևս 2011 թվականի հուլիսին թիվ 3207 օրենքով¹³:

Մասնավորապես, այդ օրենքով Քրեական օրենսգրքի 368.2 հոդվածի 1–ին մասում տեղ գտած հանցակազմի դիսպոզիցիան ուներ հետևյալ բովանդակությունը. «Պաշտոնատար անձի կողմից ապօրինի եկամուտ ստանալը զգալի չափով կամ այդպիսի

¹² Տե՛ս <http://zakon1.rada.gov.ua/laws/show/1700-18>

¹³ Տե՛ս Anti-Corruption Reforms in Ukraine, round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan <https://www.oecd.org/daf/anti-bribery/Ukraine-Round-3-Monitoring-Report-ENG.pdf>

եկամտի փոխանցումը մերձավոր ազգականներին՝ կաշառք տալու հանցակազմի բացակայության դեպքում»:

Վերջինիս համար որպես սանկցիա օրենսդիրը նախատեսել էր տուգանք՝ քաղաքացիներին նվազագույն եկամտի 500–1000–ապատիկի չափով կամ ազատության սահմանափակմամբ՝ մինչև երկու տարի ժամկետով կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկում՝ մինչև երեք տարի ժամկետով:

Սակայն, այդպիսի ձևակերպմամբ դիսպոզիցիայի թերությունը կայանում էր նրանում, որ այն էականորեն նման էր կաշառքի պասիվ ձևի հանցակազմին: Վերջինիս պարագայում՝ քրեական հետապնդման մարմինները 368.2–ով արարքը որակելու փոխարեն, այն որակում էին 368–րդ հոդվածով, մինչդեռ այդ հոդվածների սանկցիան էականորեն տաբեր է: Ստեղծված իրավիճակը պարունակում էր կոռուպցիոն ռիսկեր:

Միևնույն ժամանակ, նշենք, որ «Կոռուպցիայի կանխարգելման մասին» օրենքի 1–ին հոդվածը դեռևս 2014 թվականին տրվել է ապօրինի օգուտի հասկացությունը հետևյալ կերպ. «դրամական միջոցներ կամ այլ սեփականություն, առավելություն, արտոնություն, ծառայություն, ոչ նյութական ակտիվներ, ցանկացած այլ ոչ նյութական կամ ոչ դրամական օգուտ, որոնց խոստանում են, առաջարկում են, տրամադրում են կամ ստանում առանց օրինական հիմքերի»:

Նշենք, որ 368.2 հոդվածի երկրորդ մասի դիսպոզիցիան արդեն որպես ծանրացուցիչ հանգամանք էր նախատեսում հետևյալը. «Ապօրինի հարստացումը, եթե դրա առարկան կազմել է ապօրինի եկամուտ՝ խոշոր չափերով»:

Որպես երկրորդ մասի սանկցիա՝ նախատեսված էր ազատության սահմանափակում երկուսից հինգ տարի ժամկետով կամ ազատազրկում երեքից մինչև հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ մինչև երեք տարի ժամկետով:

Միևնույն հոդվածի երրորդ մասի դիսպոզիցիան՝ որպես ապօրինի հարստացման առավել վտանգավոր արտահայտում, բովանդակում էր հետևյալը. «Ապօրինի հարստացումը, եթե դրա առարկան կազմել է ապօրինի եկամուտ՝ առանձնապես խոշոր չափով»: Վերջինիս սանկցիան կազմում էր՝ ազատազրկում հինգից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի մինչև երեք տարի ժամկետով զրկմամբ և գույքի բռնագրավմամբ:

Իրավական որոշակիության սկզբունքին և Ուկրաինայի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններին չհամապատասխանող վերը ներկայացված այդ հոդվածը փոփոխվեց:

Արդյունքում այն ձևակերպվեց հետևյալ կերպ.

«Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի լիազորություններ իրականացնելու իրավասություն ունեցող անձի կողմից որպես սեփականություն էական չափով ակտիվների ձեռք բերումը, որոնց օրինական հիմքերը չեն հաստատվել ապացույցներով, ինչպես նաև նրանց կողմից այդպիսի ակտիվների փոխանցումն այլ անձի՝ պատժվում է մինչև երկու տարի ժամկետով ազատազրկմամբ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ՝ մինչև 3 տարի ժամկետով գույքի բռնագրավմամբ:

Նույն արարքը, որը կատարվել է պատասխանատու դիրք զբաղեցնող պաշտոնատար անձի կողմից պատժվում է ազատազրկմամբ 2-7 տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ մինչև 7 տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված արարքը հատուկ պատասխանատվության պաշտոն զբաղեցնող պաշտոնատար անձի կողմից կատարելու դեպքում պատժվում է ազատազրկմամբ 5-10 տարի ժամկետով որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկմամբ մինչև 3 տարի ժամկետով, գույքի բռնագրավմամբ»¹⁴:

Վերը ներկայացված հոդվածում ակտիվների զգալի չափ է համարվում դրամական միջոցները կամ այլ սեփականությունը, ինչպես նաև եկամուտներ, եթե դրանց արժեքը գերազանցում է քաղաքացու նվազագույն եկամտի 1000-ապատիկը: Ակտիվների փոխանցում ասելով հասկացվում է ցանկացած գործարքի կնքում, որի հիման վրա ծագում է սեփականության կամ օգտագործման իրավունք, ինչպես նաև այլ անձին դրամական միջոցների կամ այլ սեփականության փոխանցում՝ այդպիսի գործարքների կնքման համար:

¹⁴ St u <http://meget.kiev.ua/kodeks/ugolovniy-kodeks/>

Եթե համադրենք, Ուկրաինայի քրեական օրենսգրքում ամրագրված ապօրինի հարստացման հանցակազմի ձևակերպումը մինչև 2015թ.-ը և դրանից հետո, ապա տարբերությունն ակնհայտ է: Մասնավորապես, նախկին ձևակերպումը խեղաթյուրում էր ապօրինի հարստացման էությանը, մինչդեռ, հոդվածի դիսպոզիցիայի նոր ձևակերպումն արդեն իսկ համապատասխանում է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածում ամրագրված «որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, եւ որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել» ձևակերպմանը:

Սակայն, դեռևս շարունակում է չլուծված մնալ տվյալ հանցակազմին բնորոշ քրեադատավարական մի հատկանիշ՝ կապված հանցակազմի հատկանիշների ապացուցման բեռը կրող հասցեատիրոջ հետ: Մասնավորապես, Ուկրաինայի Հանրապետության գործող քրեական օրենսգրքի 368.2 հոդվածում ամրագրված ձևակերպումը « (...) որոնց օրինական հիմքերը չեն հաստատվել ապացույցներով (...)» նշանակում է, որ այդ հանցակազմի հատկանիշների ապացուցման բեռն ընկած է քրեական հետապնդման մարմինների վրա, սակայն միջազգային կոնվենցիան այդ հոդվածի հատկանիշների ապացուցման բեռը դնում է վերջինիս հասցեատիրոջ վրա «(...) նա (այսինքն՝ պաշտոնատար անձը – Աշխատանքային խումբ) չի կարող խելամտորեն հիմնավորել (...)» ձևակերպմամբ:


Գիտակցելով այդ խնդրի առկայությունը՝ Ուկրաինայի Հանրապետության օրենսդիր մարմնի կողմից մշակվել է օրինագիծ, որը կարգավորում է այն: Մասնավորապես՝ 2016 թվականի փետրվարի 4-ի թիվ 4025 օրինագծով՝ «Ուկրաինայի քրեական օրենսգրքի 368-2 հոդվածում փոփոխություններ կատարելու մասին համաձայնեցնելով ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային և Ուկրաինայի Սահմանադրությանը»:

Փոփոխության արդյունքում նախատեսվում է Ուկրաինայի քրեական օրենսգրքի 368.2 հոդվածի 1-ին մասի « (...) որոնց օրինական հիմքերը չեն հաստատվել ապացույցներով (...)» ձևակերպումը փոխարինել «(...) որոնք նա (այսինքն՝ պաշտոնատար անձը – Աշխատանքային խումբ) չի կարողանում հիմնավորել»¹⁵:

¹⁵ Տե՛ս http://search.ligazakon.ua/1_doc2.nsf/link1/JH33T00I.html

Չնայած, որ Ուկրաինայում ապօրինի հարստացման հանցակազմն իր էությամբ նորամուծություն է, այնուամենայնիվ, հարկ ենք համարում ստորև ներկայացնել նաև արդեն ձևավորված վիճակագրությունը այդ հանցակազմի կիրառելիության վերաբերյալ.

Այսինքն, հանցակազմը 2011 թվականի կեսից ներդրվելուց հետո իրավակիրառ



պրակտիկայում սկսվեց կիրառվել 2012 թվականից, իսկ այնուհետև կրկին ընկավ կիրառելիության մակարդակը: Սակայն կարծում ենք, որ այս վիճակագրությունն իրականում չի արտացոլում ապօրինի հարստացման հանցակազմի կիրառելիության արդյունավետությունը, քանի որ փաստացիորեն այն ներդրվել է 2013 թվականին:

1.2 Մոլորվայի Հանրապետություն

Մոլորվայի Հանրապետությունը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիային միացել է 2004 թվականի սեպտեմբերի 28-ին, իսկ վավերացրել այն 2007 թվականի հոկտեմբերի 1-ին:

Մոլորվայի Հանրապետության քրեական օրենսգրքում ապօրինի հարստացման հանցակազմը 330.2 հոդվածի ներքո ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 23-ին, որն ուժի մեջ է մտել 2014 թվականի փետրվարի 25-ին¹⁶:

Այդ հոդվածում ամրագրված հանցակազմի դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ.

«Պաշտոնատար կամ հանրային անձի կողմից անձամբ կամ երրորդ անձի կողմից սեփականություն ունենալը, որի արժեքը էականորեն գերազանցում է իր եկամուտները և որի վերաբերյալ ապացույցներով հաստատվել է, որ այդ չէր կարող ձեռք բերվել օրինական ճանապարհով»:

¹⁶ Տե՛ս <http://lex.justice.md/ru/331268/>

Որպես սանկցիա նախատեսվում է պատիժ՝ տուգանք՝ 6000–ից 8000 պայմանական միավորի չափով, կամ ազատազրկում՝ 3–ից 7 տարի ժամկետով, երկու դեպքում էլ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկում 10–ից 15 տարի ժամկետով:

Նույն հոդվածի երկրորդ մասում Մոլդովայի օրենսդիրը որպես ծանրացուցիչ հանգամանք նշել է. «նույն արարքը, որը կատարվել է պատասխանատու պաշտոնատար անձի կողմից՝ պատժվում է տուգանքով՝ 8000–ից 10000 պայմանական միավորի կամ ազատազրկմամբ՝ 7–ից 15 տարի ժամկետով՝ երկու դեպքում էլ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ»:

Մոլդովայի քրեական օրենսգրքի 106–րդ հոդվածի ուժով՝ անօրինական եղանակով ձեռք բերված գույքը ենթակա է բռնագրավման:

Մինևույն ժամանակ, ապօրինի հարստացման հանցակազմի հետ կապված հետաքրքիր իրավակարգավորում է նախատեսված քրեական օրենսգրքի 106.1 հոդվածում՝ «ընդլայնված բռնագրավում» վերտառության ներքո:

Այդ հոդվածում նշված է, որ ապօրինի հարստացման հանցակազմի դեպքում ընդլայնված բռնագրավումը կարող է կիրառվել հետևյալ երկու պայմանների առկայության դեպքում.

ա) եթե դատապարտյալի կողմից ձեռք բերված սեփականության արժեքը գերազանցում է 5 տարվա ընթացքում՝ մինչև հանցանքի կատարումը և հանցանքի կատարումից հետո՝ մինչև դատավճռի կայացումը, ձեռք բերված օրինական եկամուտները:

բ) գործով ներկայացված ապացույցների հիման վրա դատական ատյանի կողմից հաստատվել է համապատասխան սեփականության ծագումը հանցավոր գործունեությունից՝ ապօրինի հարստացումից:

Մոլդովայի քրեական օրենսգրքում ներդրված ընդլայնված բռնագրավումը 98–րդ հոդվածի համաձայն ոչ թե պատժատեսակ է, այլ անվտանգության միջոց և կրում է կանխարգելիչ բնույթ:

Մոլդովայի քրեական օրենսգրքում ամրագրված ապօրինի հարստացման հանցակազմի դիսպոզիցիայի վկայում է, որ այդ հոդվածում մատնանշված հատկանիշների առկայության ապացուցման բեռը կրում է քրեական հետապնդման մարմինը:

Ղեռնս, 2015 թվականի ապրիլի 16-ին Մոլդովայի Սահմանադրական դատարանը թիվ 60a/2014 որոշման 107-րդ կետում արտահայտել է իրավական դիրքորոշում, որ ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների առկայության ապացուցման բեռը բացառապես դրված է քրեական հետապնդման մարմինների վրա¹⁷:

Սակայն, այդպիսի իրավական դիրքորոշումը իրականում չի համապատասխանում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածին, որի համաձայն ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների առկայության ապացուցման բեռը կրում է այն անձը, որին վերագրվում է տվյալ հանցանքի կատարումը:

1.3 Վրաստանի Հանրապետություն

Վրաստանի Հանրապետությունը չնայած որ միացել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային 2008 թվականի նոյեմբերի 4-ին, սակայն դեռևս Վրաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածին համապատասխան նախատեսված չէ ապօրինի հարստացումը:

1.4 Լատվիայի Հանրապետություն

Լատվիայի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային 2005 թվականի մայիսի 19-ին, իսկ վավերացրել այն 2006 թվականի հունվարի 4-ին: Այնուամենայնիվ, Լատվիայի Հանրապետությունում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդված նախատեսված ապօրինի հարստացումը դեռևս չի քրեականացվել:

1.5 Լիտվայի Հանրապետություն

Լիտվայի Հանրապետությունը ստորագրել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան 2003 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ վավերացրել այն 2006 թվականի դեկտեմբերի 21-ին:

¹⁷ Ст' у о контроле конституционности некоторых положений Уголовного кодекса и Уголовно-процессуального кодекса (расширенная конфискация и незаконное обогащение) (Обращение No 60a/2014)

Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքում 2010 թվականի դեկտեմբերի 2-ին կատարված լրացման արդյունքում՝ ամրագրվել է ապօրինի հարստացման հանցակազմը 189.1 հոդվածի ներքո¹⁸:

Այդ հոդվածի 1-ին մասի համաձայն սահմանված է, որ յուրաքանչյուր անձ, ով տիրապետում է ավելի քան 500 MSL ակտիվների, իմանալով կամ երբ նա կարող էր կամ պետք է իմանար, որ ակտիվները չեն կարող ձեռք բերվել օրինական եկամտով, պատժվում է տուգանքով կամ կալանքով կամ ազատազրկմամբ մինչև 4 տարի ժամկետով:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Լիտվայի քրեական օրենսգրքում նախատեսված ապօրինի հարստացման հանցակազմի անմիջական օբյեկտն է՝ սեփականության, գույքային իրավունքների և գույքային շահերի անվտանգության ապահովման հասարակական հարաբերությունները:

Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսված ապօրինի հարստացման հանցակազմի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ վերջինս ապօրինի հարստացման հանցակազմի համար քրեական պատասխանատվություն է սահմանում ոչ միայն պաշտոնատար անձանց, այլ նաև պաշտոնատար անձ չհանդիսացողների նկատմամբ: Ի դեպ, մինչև 189.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն, հանցակազմի սուբյեկտ են համարվում նաև իրավաբանական անձինք:

Քրեական օրենսգրքի 189.1 հոդվածի դիսպոզիցիայից հետևում է, որ հանցակազմի սուբյեկտի վրա է օրենսդիրը դրել տիրապետող ակտիվների և օրինական եկամուտների համապատասխանության ապացուցման բեռը, ինչն ամբողջությամբ համապատասխանում է ՄԱԿ-ի կոռուպցիայի մասին կոնվենցիայի 20-րդ հոդվածին:

Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Լիտվայի Հանրապետության քրեական օրենսգրքում նախատեսված ապօրինի հարստացման հանցակազմը պարունակում է նաև խրախուսական նորմ: Մասնավորապես, եթե անձը՝ տեղեկացնում է իրավապահ մարմիններին ապօրինի հարստացման մասին (մինչև վերջիններիս մոտ կասկածի առաջացումը) և աջակցում հանցագործության բացահայտմանը, ապա այդ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից: Այդ նորմն ըստ էության հանդիսանում

¹⁸ Տե՛ս https://20.navalny.com/site/usage_popup/

է գործուն զղջալու դասական արտահայտում, որը նախատեսվել է Լիտվայի օրենսդրի կողմից:

Լիտվայի Հանրապետությունում ապօրինի հարստացման հանցակազմ պարունակող հանցագործությունների վերաբերյալ հետաքննություն է իրականացնում Լիտվայի անկախ հակակոռուպցիոն մարմինը՝ Հատուկ քննչական ծառայությունը:

Դեռևս 2012 թվականի հունիսի 25-ին, Լիտվայի Սահմանադրական դատարանը քննել է ապօրինի հարստացման սահմանադրականությունը Վիլնյուս քաղաքի տարածքայի դատարանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա¹⁹: Դիմումատուն մատնանշել էր, որ ապօրինի հարստացման հանցակազմը հակասում է իրավունքի գերակայությանը և Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված անմեղության կանխավարկածին: Սակայն, Սահմանադրական դատարանը արդարացիորեն գտել է, որ ապօրինի հաստացման հանցակազմը համապատասխանում է Լիտվայի Սահմանադրությանը:

1.6 Էստոնիայի Հանրապետություն

Էստոնիայի Հանրապետությունը միացել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային 2010 թվականի ապրիլի 12-ին, սակայն դեռևս Էստոնիայի Հանրապետությունում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածին համապատասխան ապօրինի հարստացումը չի քրեականացվել:

2.ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՎՐՈՊԱՅՈՒՄՉ²⁰

2.1 Մակեդոնիայի Հանրապետություն

Մակեդոնիան Հանրապետությունը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացրել է 2005 թվականի օգոստոսի 18-ին, իսկ այն վավերացրել է 2007 թվականի ապրիլի 13-ին:

¹⁹ Տե՛ս [http://www.lrkt.lt/data/public/uploads/2015/03/2012-06-25 s decision.pdf](http://www.lrkt.lt/data/public/uploads/2015/03/2012-06-25_s_decision.pdf)

²⁰ Արևելյան Եվրոպայի երկրներից ապօրինի հարստացման մասին կարգավորում առկա է Մակեդոնիայում: Ապօրինի հարստացման մասին կարգավորում առկա չէ հետևյալ երկրների քրեական օրենսգրքերում՝ Ալբանիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բուլղարիա, Խորվաթիա, Չեխիայի Հանրապետություն, Հունգարիա, Կոսովո, Մոնտենեգրո, Լեհաստան, Ռումինիա, Սերբիա, Սլովակիա և Սլովենիա: Իսկ Ռումինիան և Սլովակիան ունեն քաղաքացիաիրավական հարթությունում որոշակի իրավակարգավորումներ, որոնք էական նմանություններ ունեն ապօրինի հարստացման կարգավորումների հետ:

Մակեդոնիայի քրեական օրենսգրքի 359(ա) հոդվածը կոչվում է «ապօրինի հարստացումը և ունեցվածքի քողարկումը»: Վերջինիս բաժին 1-ում ապօրինի հարստացման դիսպոզիցիան սահմանված է հետևյալ կերպ. «Պետական ձեռնարկության, պետական կառույցի կամ այլ իրավաբանական անձի այն պաշտոնյան կամ պատասխանատու անձը, ով տնօրինում է պետական կապիտալը և, դեմ գնալով ունեցվածքային կարգավիճակի կամ դրա փոփոխության մասին ծանուցելու իր իրավական պարտավորությանը, տրամադրում է սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն իր ունեցվածքի կամ իր ընտանիքի անդամների ունեցվածքի մասին, ինչն զգալիորեն գերազանցում է նրա օրինական եկամուտը, պետք է դատապարտվի վեց ամսվանից մինչև հինգ տարվա ազատազրկման և վճարի տուգանք»:

Մակեդոնիայի Սահմանադրության 13-րդ հոդվածում ամրագրված է. «Անձը, ում մեղադրանք է առաջադրվում հանցանքի համար, պետք է անմեղ ճանաչվի մինչև նրա մեղքի հաստատումը դատարանի վերջնական որոշմամբ»: Այնուամենայնիվ, ապօրինի հարստացման հանցակազմի դեպքում անմեղության ապացուցման բեռն ընկնում այդ հանցակազմի հասցեատիրոջ՝ այն պաշտոնատար անձի վրա, ով պետք է բացատրություններ ներկայացնի իր ունեցվածքի ծագման վերաբերյալ:

Մակեդոնիայի քրեական օրենսգրքի 359 (ա) հոդվածի 4 մասում սահմանվում է. «Հանցանք կատարած անձը չպետք է պատժվի այն գործողությունների համար, (...), եթե նա դատարանի առջև հարցաքննվելու ընթացքում ընդունելի կերպով հիմնավորում է ունեցվածքի ծագումը»: Հետևաբար, ընդունելի հիմնավորում տալ չկարողանալը հանգեցնում է այս հանցանքի համար անձի մեղավորության ճանաչմանը:

Հանցանքի համար սանկցիան 6 ամսվանից մինչև 8 տարի ժամանակահատվածով ազատազրկումն է և տուգանքը: Օրենքը կարգավորվում է նաև ունեցվածքի փոխհատուցման տարբերակը:

Այսպես, այն ունեցվածքը, որը գերազանցում է եկամուտների քանակը, որոնք հանցանք կատարած անձը ստանում է օրենքով և որոնց համար հանցանք կատարած անձը տրամադրել է սխալ կամ ոչ լիարժեք տեղեկատվություն, կամ չի տրամադրել տվյալներ, կամ թաքցրել է դրա իրական աղբյուրները, պետք է բռնագրավվի, իսկ եթե բռնագրավումը հնարավոր չէ, ապա պետք է բռնագրավվի հանցանք կատարած անձին պատկանող այլ համարժեք ունեցվածք:

Այն ունեցվածքը, որի մասին խոսվում է վերոգրյալում, պետք է բռանգրավվի հանցանք կատարած անձի ընտանիքի այն անդամներից, ում համար այն ձեռք է բերվել կամ ում այն փոխանցվել է, եթե ակնհայտ է, որ նրանք չեն տրամադրել համարժեք փոխհատուցում, ինչպես նաև երրորդ անձանցից, եթե նրանք չեն կարողանում ապացուցել, որ համարժեք փոխհատուցում են տրամադրել:

Հատկանշական է նաև ընդգծել պաշտոնյաների՝ իրենց ունեցվածքի և եկամուտների մասին ծանուցելու պարտավորությունը, որը սահմանված է 2002 թ. Կոռուպցիայի կանխարգելման օրենքի 33 և 34 հոդվածներում: Նշանակումից կամ ընտրությունից հետո ծանուցելու պարտավորություն սահմանելու հետ մեկտեղ՝ օրենքը նաև նշում է, որ ունեցվածքի ցանկացած զգալի աճի կամ ցանկացած նոր գույքի գնման մասին պետք է ծանուցել երեք ամսվա ընթացքում: Ունեցվածքի հայտարարագիր ներկայացնելու հետ մեկտեղ պաշտոնատար անձինք նաև պետք է հրաժարվեն իրենց բանկային գաղտնիքի իրավունքից:

Մակեդոնիայի Հանրապետությունում Կոռուպցիայի կանխարգելման պետական հանձնաժողովը պատասխանատու է պաշտոնյաների գույքի և եկամուտների հայտարարագրերը ստանալու և դրանք նախնական վերլուծության ենթարկելու համար: Ինչևէ, աշխատակազմի միայն երկու անդամներ են կրում այս պարտականությունը, մինչդեռ ամեն տարի ավելի քան 1000 գույքի և եկամուտների հայտարարագրեր են ստացվում²¹:

Երբ գույքի և եկամուտների հայտարարագրի վերլուծությունը ի հայտ է բերում հակասություն՝ հայտարարագրում ներառված տեղեկատվության և այլ տվյալների միջև, ապա գործը հետագա ստուգումների համար փոխանցվում է Պետական եկամուտների գրասենյակ: Պետական եկամուտների գրասենյակը կարող է նաև հարցաքննել համապատասխան անձին և իրավասու է 70 %-անոց հարկ դնել նրա չհիմնավորված ունեցվածքի արժողության վրա: Հետագայում, եթե Պետական եկամուտների գրասենյակը պարզում է, որ առկա են ապացույցներ առ այն, որ 359 (ա) հոդվածով կատարվել է հանցագործություն, ապա գործն ուղարկվում է դատախազություն:

²¹ St' u Group of States against Corruption (GRECO), Fourth Evaluation Round: Corruption Prevention in Respect of Members of Parliament, Judges and Prosecutors. Evaluation Report, 'The former Yugoslav Republic of Macedonia' (Strasbourg: Council of Europe, 17 March 2014), p. 57

Մակեդոնիայում Կոռուպցիայի կանխարգելման պետական հանձնաժողովն ունի փոքր աշխատակազմ: Հանձնաժողովը և Պետական եկամուտների գրասենյակը կարծես թե հայտարարագրերի վերլուծության նույն իրավասությունն ունեն. այսպիսով, առաջ է գալիս պարտականությունների համընկնման հարցը և դրանից բխող վերահսկողության պակասը գործընթացի նկատմամբ:

Կոռուպցիայի կանխարգելման պետական հանձնաժողովի և Պետական եկամուտների գրասենյակի համար պաշտոնատար անձանց ունեցվածքի, արժեթղթերի և բաժնեմասերի ռեգիստրը բաց է և հասանելի:

2.2 Ռումինիայի Հանրապետություն

Ռումինիայի Հանրապետությունը ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2003 թվականի դեկտեմբերի 9–ին, իսկ վավերացրել այն 2004 թվականի նոյեմբերի 2–ին:

1996 թ. հոկտեմբերի 16–ին ընդունված թիվ 115 օրենքը (փոփոխված) կոչվում է «Բարձրաստիճան պաշտոնատար անձանց, դատավորների, պետական պաշտոնյաների և պետական բարձր պաշտոն ունեցող այլ անձանց ունեցվածքի հայտարարագրումը և վերահսկողությունը»: Այդ իրավական ակտը բարձրաստիճան պաշտոնյաներից պահանջում է ներկայացնել ունեցվածքի և շահերի հայտարարագրեր:

Անհրաժեշտության դեպքում, այդ իրավական ակտի հիման կատարվում է պաշտոնատար անձի ունեցվածքի վարչական կարգով բռնագրավում, եթե ունեցվածքի արժողության և պաշտոնյայի օրինական եկամուտի միջև հայտնաբերվում է էական անհամապատասխանություն:

Ապօրինի հարստացման հանցանքի քննության համար պատասխանատու է Ազգային բարեխղճության մարմինը (ԱԲՄ): Այն հիմնադրվել է 2007 թ.-ին, և դրա գործունեությունն ուղղված է պետական պաշտոնյաների եկամուտների և գույքի հայտարարագրերը վերլուծելուն, հնարավոր շահերի բախման և կասկածելի եկամտի մակարդակների հասկոթոշումը:

Եթե ԱԲՄ-ը պաշտոնական եկամտի և հայտարարագրված ունեցվածքի միջև հայտնաբերում է այնպիսի անհամապատասխանություն, որն անցնում է 10 000 եվրոյի սահմանը, ապա գործը փոխանցվում է Ունեցվածքի քննչական հանձնաժողովին:

Նախկինում՝ մինչ 2010 թվականը, Ռումինիայում ապօրինի հարստացումը գտնվում էր քրեաիրավական հարթությունում: Քրեական հետապնդման մարմինը պետք է

ապացուցեր պաշտոնատար անձի ձեռք բերած եկամտի և ունեցվածքի միջև առկա առերևույթ անհամապատասխանությունը: Եթե քրեական հետապնդման մարմինը կարողանում էր ձեռք բերել եկամտի և ունեցվածքի միջև անհամաչափության ակնհայտ ապացույցներ, ապա սահմանադրական երաշխիքը դադարում էր գործել և ապօրինի հարստացման հատկանիշների բացակայության ապացուցման բեռն ընկնում էր պաշտոնատար անձի վրա, ով պետք է ապացույցներ ներկայացներ այն մասին, որ իր ունեցվածքն օրինականորեն է ձեռք բերվել:

Ռուսիայի Սահմանադրության 23(11) հոդվածով սահմանվում է. «Ցանկացած անձ համարվում է անմեղ, քանի դեռ նա մեղավոր չի ճանաչվում դատարանի վերջնական որոշմամբ»: Իսկ 44(8) հոդվածով սահմանվում է, որ «օրինականորեն ձեռք բերված գույքը և եկամուտները չեն կարող բռնագրավել: Ձեռքբերման օրինականությունը պետք է ենթադրվի»:

Հիմք ընդունելով այդ Սահմանադրական նորմերը՝ 2010 թվականին, Ռուսիայի Սահմանադրական դատարանը որոշել էր, որ ԱԲՄ-ի լիազորությունները հակասահմանադրական են և ունեցվածքի բռնագրավման վերը ներկայացված մեխանիզմը հակասում է անմեղության կանխավարկածին: Կարևոր է նշել, որ այդ ժամանակ Սահմանադրական դատարանի 9 դատավորներից 7-ը հետաքննվում էին ԱԲՄ-ի կողմից:

Հետևելով դատարանի որոշմանը՝ խորհրդարանը, փոփոխեց 144/2007 օրենքը: Ինչևէ, քաղաքացիական հասարակությունը և քաղաքական գործիչները արտահայտեցին իրենց անհամաձայնությունը Սահմանադրական դատարանի այդ որոշմանը: Իսկ Ռուսիայի նախագահը հրաժարվեց հաստատել փոփոխված օրենքը: Ի վերջո, ԱԲՄ-ի լիազորությունները վերականգնվեցին, թեև բյուջեն կրճատվեց:

Ներկայումս, Ունեցվածքի քննչական հանձնաժողովն անցկացնում է հետագա վերլուծություն, և դրա արդյունքերի հիման վրա դատարանը կարող է արձակել հրաման՝ բռնագրավելու ունեցվածքը, կամ տուգանել պաշտոնատար անձին՝ համարժեք գումարի չափով: Ինչևէ, եթե այն պարզում է, որ ունեցվածքն ունի օրինական ծագում, ապա գործը կարճվում է:

Ռուսիայում Ունեցվածքի քննչական հանձնաժողովը հետաքննվող անձին թույլատրում է փաստաթղթերի ստացումը, իրավաբան ունենալը, ով կներկայացնի իր շահերը: Հետաքննվող անձն իր ամուսնու/կնոջ և ցանկացած այլ համապատասխան անձի

հետ միասին հրավիրվում է հանձնաժողով և հարցաքննվում վերջինս կողմից: Հետաքննվող անձին առաջարկվում է ներկայացնել բանավոր կամ գրավոր ապացույցներ:

Դատավարությունը մեկնարկելուց հետո՝ երեք ամիսների ընթացքում, հանձնաժողովը հրապարակում է իր որոշումը՝ գործը կարճելու, կամ այն վարչաիրավական հարթություն տեղափոխելու, կամ էլ գործը դատախազին ուղարկելու մասին, եթե առկա են բավարար ապացույցներ, որ կատարվել է հանցագործություն:

Սանկցիան նշանակվում է վարչական դատարանի հրամանով, որն ընդգրկում է կասկածվող գույքը և եկամուտները, ինչպես նաև դրանց համարժեք գումարը բռնագրավելը: Վերջին դեպքում գույքի և եկամուտների արժեքը սահմանվում է դատական փորձագետների կողմից: Քանի որ ապօրինի հարստացումը կրում է վարչաիրավական և ոչ թե քրեաիրավական բնույթ, ազատագրվում չի նախատեսվում:

2008 թնականից ի վեր Բարեխղճության ազգային գործակալությունը հաստատել/բացահայտել է ձեռք բերված գույքի (սեփականության) և ստացած եկուամուտների միջև էական տարբերության 125 դեպք: Այսօրվա (2016թ.) դրությամբ Դատարանը 15 գործով չհիմնավորված ունեցվածքի բնագրավման որոշումներ է կայացրել: Այսպիսով, մոտավորապես 3.000.000 Եվրո արդեն բռնագրավել է և փոխանցվում է պետական բյուջե: Իսկ մոտավորապես 577,300 եվրո ենթակա է բռնագրավման:

2.3 Սլովակիայի Հանրապետություն

Սլովակիայի Հանրապետությունը 2003 թվականի դեկտեմբերի 9–ին ստորագրել է ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան, իսկ այն վավերացրել է 2006 թվականի հունիսի 1–ին:

Սլովակիայում ապօրինի հարստացումը չի համարվում քրեական հանցանք, սակայն որոշակի կարգավորում ունի քաղաքացիաիրավական հարթությունում՝ 2010թ.-ի «Գույքի ծագման ապացուցման մասին» օրենքով սահմանված կարգով:

Օրենքի երրորդ հոդվածը սահմանում է, որ գույքի ապօրինի ձեռքբերման մասին կասկածներ ունենալու դեպքում պետք է հաղորդում ներկայացվի Ֆինանսական ոստիկանություն (կամ «Ֆինանսական հետաքննությունների բաժին»): Հաղորդում ներկայացնելու իրավունք ուի. ա) պետական մարմինը, եթե ունի «հիմնավորված կասկած առ այն, որ անձի ունեցվածքը գոյացել է ապօրինի եկամտից», բ) ցանկացած ֆիզիկական և

իրավաբանական անձ, որն ունի «ողջամիտ կասկածներ այն մասին, որ անձի ունեցվածքը գոյացել է ապօրինի եկամտից»: Անանուն հաղորդումները չեն ընդունվում:

Հանրության, պետական մարմինների կողմից ներկայացվող հաղորդումները պետք է պարունակեն հետևյալ տվյալները. կասկածյալի անուն-ազգանունը, այն ունեցվածքը, որը կասկածվում է ապօրինի ձեռքբերված լինելու մեջ:

Պետք է նկատի ունենալ նաև, որ ապօրինի հարստացման սուբյեկտը ոչ միայն պաշտոնատար անձինք են, այլ առհասարակ 1-ին հոդվածի համաձայն՝ ցանկացած «ֆիզիկական կամ իրավաբանական անձինքն»-, որոնց պատկանող ունեցվածքը կարող է ենթարկվել բռնագրավման:

Ապօրինի հարստացումը համարվում է առերևույթ ապացուցված այն դեպքում, երբ ձեռք բերված գույքի արժեքը օրինական եկամտին գերազանցում է առնվազն նվազագույն աշխատավարձի 1500–ապատիկով (480 900 եվրոյին համարժեք):

Ֆինանսական ոստիկանությունը իրականացնում է հետաքննություն և դրա արդյունքները ներկայացնում է դատախազին, ով դիմում է դատարանին գույքի բռնագրավման հայցով:

Ինչ վերաբերում է անմեղության կանխավարկածին, ապա Սլովակիայի սահմանադրությունը (հոդված 50(2)) սահմանում է հետևյալը. «Յուրաքանչյուր հետաքննության մեջ գտնվող անձ համարվում է անմեղ, քանի դեռ իր մեղավորությունը չի ապացուցվել դատարանի վերջնական դատավճռով»:

Անմեղության կանխավարկածը Սլովակիայում գործող ապօրինի հարստացման իրավակարգավորման պարագայում չի խախտվում: Գործնականում, դատախազը դիմում է գույքի բռնագրավման հայցով, եթե նա հանգել է այն «խելամիտ եզրակացության», որ առկա է հակասություն անձի ունեցվածքի արժեքի և օրինական եկամտի միջև, որի պարագայում անձը բացատրություն չի տվել գույքի ծագման մասին, կամ դատախազը համարում է, որ այդ բացատրությունը բավարար չի եղել:

Ապացույցները հավաքագրելիս Ֆինանսական ոստիկանությունն իրավունք ունի՝ տեղեկատվություն պահանջել այլ պետական մարմիններից, ինչպես նաև բացատրություններ շահագրգռված անձանցից: Ֆինանսական ոստիկանության բաժնի աշխատակիցներն իրավունք ունեն՝ մուտք գործել մասնավոր սեփականության տարածքներ, ուսումնասիրելու փաստաթղթեր և պահանջելու բանկային հաշիվների քաղվածքներ:

Ֆինանսական ոստիկանության ուղարկած գործը ստանալուց հետո՝ դատախազը կասկածյալից բացատրություն է պահանջում, ինչպես նաև փաստաթղթային ապացույցներ ունեցվածքի ծագման մասին:

Ունեցվածքի արժեքը գնահատելիս որպես հիմք է ընդունվում այն գինը, որով ձեռք էր բերվել գույքը՝ բացառությամբ դեպքերի, երբ դա հնարավոր չէ հաստատել: Այդ դեպքերում գույքի արժեքը որոշելիս հիմք է ընդունվում գույքի շուկայական արժեքը: Ինչևէ, առքուվաճառքի պայմանագրում նշված գնի հիման վրա արժեքի հաստատումը խոցելի է այն առումով, որ իրական գինը կարող է գերազանցել փաստաթղթերում նշված գինը:

Որպես սանկցիա նախատեսվում է ունեցվածքի բռնագրավումը: Ի հավելումն, դատարանն ունի նաև գույքն արգելանքի տակ դնելու իրավասություն:

ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցագործության դեմ պայքարի գրասենյակի (ՄԱԹՀՊԳ) հաշվետվության համաձայն՝ Սլովակիայում օրենքն ուժի մեջ մտնելուց առ այսօր չի գրանցվել գույքի բռնագրավման որևէ դեպք²²: 2011թ.-ին նախաձեռնվել էր 69 գործ, որոնցից Ֆինանսական ոստիկանությունը հետաքննել է 44-ը, բայց ընդամենը 5 դեպքում է եղել բավարար ապացույց ապօրինի հարստացման վերաբերյալ: Սակայն, այդ 5 դեպքերից ոչ մեկի դեպքում գույքի արժեքի և օրինական եկամտի միջև տարբերությունը չի կազմել նվազագույն աշխատավարձի 1500-ապատիկը: Հետևաբար, Ֆինանսական ոստիկանությունը ոչ մի գործ իրավասու չի եղել ուղարկելու դատախազություն:

ՄԱԹՀՊԳ-ի հաշվետվությունում արվում է այն եզրահանգումը, որ ապօրինի հարստացման անհրաժեշտ պայմանը՝ նվազագույն աշխատավարձի 1500-ապատիկի շեմը, չափազանց խիստ է և ենթակա է նվազեցման:

Ֆինանսական ոստիկանություն 2012թ-ի հաշվետվությունում նշել է, որ 2012 թ.-ին 38 նոր գործ է նախաձեռնվել՝ ի լրումն այն 27 գործերի, որոնք դեռ ընթացքի մեջ էին մնացել նախորդ տարվանից²³: Ինչևէ, միայն երկու դեպքերում էին ձեռք բերվել բավարար ապացույցներ գործը դատախազություն ուղարկելու համար:

²² St' u Country review report of Slovak Republic. Review by Malta and Poland of the implementation by the Slovak Republic of articles 15 – 42 of Chapter III. “Criminalization and law enforcement” and articles 44 – 50 of Chapter IV. “International cooperation” of the United Nations Convention against Corruption for the review cycle 2010-2015. UNODC

²³ St' u http://www.minv.sk/swift_data/source/policia/naka_opr/fsj/Annual%20report%202012.pdf

3.1 Արգենտինայի Հանրապետություն

Արգենտինայի Հանրապետությունը եղել է այն առաջին պետություններից մեկը, որը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2003 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ վավերացրել այն 2006 թվականի օգոստոսի 28-ին:

Արգենտինայում ապօրինի հարստացումը որպես հանցակազմ քրեական օրենսգրքում ինկորպորացվել է դեռևս 1964 թվականին, այնուհետև փոփոխվել 1999թ.-ին: Այն ամրագրվել է 286-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո:

Արգենտինայում ապօրինի հարստացման հանցակազմը ձևակերպված է հետևյալ կերպ. «Յուրաքանչյուրոք, ով, ըստ պահանջի, չի կարողանա հիմնավորել զգալի հարստացման ձագումը իր կամերրորդ կողմի համար թաքցնելու նպատակով, որը ձեռք է բերվել պետական պաշտոն կամ պետական համակարգում աշխատանք ստանձնելուց հետո, և պարտականությունները դադարեցնելուց հետո 2 տարվա ընթացքում, պետք է պատժվի 2-ից մինչև 6 տարի ժամկետով ազատազրկմամբ, հարստացման արժեքի 50-ից մինչև 100 տոկոսի չափով տուգանքով և զբաղեցրած պաշտոնից կամ աշխատանքից հեռացմամբ և ցմահ տարազրկմամբ: Հարստացում կհամարվի չմիայն, երբանձիե կամ ունեերը կաճ են գումարի և/կամ գույքի ավելացման եղանակով, այլևս, երբանձի պարտքերը չեղյալ և/կամ պարտավորությունները մարված կհամարվեն: Անձը, ով կարտակի հարստացումը, պետք է կրի նույն պատիժը, ինչորհանցագործության կատարողը»:

Հոդվածում ներկայացված դիսպոզիցիայից պարզ է դառնում, որ վերջինիս սուբյեկտը հատուկ է: Մասնավորապես, յուրաքանչյուր ոք, ով հանդիսանում կամ հանդիսացել է պաշտոնատար անձ: Բացի այդ, հետաքրքիր է նաև այն մոտեցումը, որ ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետը՝ անկախ անցած ժամանակահատվածից, ընթացքի մեջ է ընդհուպ պաշտոնական պարտականությունների կատարումը դադարեցնելու պահից 2 տարվա ընթացքում:

Միևնույն ժամանակ, դիսպոզիցիայից պարզ է դառնում, որ հանցակազմի հատկանիշների բացակայության ապացուցման բեռը կրում է այդ հոդվածի հասցեատերը:

Այդպիսի մոտեցումն արդարացված է և ինքնին հանդիսանում է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածի պահանջը:

Իսկ, որպես ապօրինի հարստացման սանկցիա Արգենտինայի օրենսդիրը նախատեսել է 2-ից մինչև 6 տարի ժամկետով ազատազրկում, հարստացման արժեքի 50-ից մինչև 100 տոկոսի չափով տուգանք կամ զբաղեցրած պաշտոնից կամ աշխատանքից հեռացում կամ ցմահ որակազրկում: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ Արգենտինայի քրեական օրենքի համաձայն՝ միևնույն սանկցիան կիրառելի է նաև այն անձի նկատմամբ, ով կպարտակի ապօրինի հարստացումը:

Ի դեպ, ըստ Արգենտինայի քրեական օրենքի՝ ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշներն առկա կլինեն ոչ միայն այն դեպքում, երբ անձի եկամուտները կաճեն գումարի և/կամ գույքի ավելացման եղանակով, այլ նաև, երբ անձի պարտքերը չեղյալ և/կամ պարտավորությունները մարված կհամարվեն:

Բացի վերոգրյալից, Արգենտինայի օրենսդիրը սահմանել է նաև այն նախապայմանների առկայությունը քրեական օրենքի մակարդակով, որոնց պարագայում միայն կարող է արդյունավետ կիրառվել ապօրինի հարստացման հանցակազմը: Այսպես, քրեական օրենսգրքի 286-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք, ով չարամտորեն կխուսափի օրենքով նախատեսված դեպքերում գույքի հայտարարագիր ներկայացնելու պարտավորությունից, կպատժվի 15 օրից մինչև 2 տարի ժամկետով ազատազրկմամբ կամ ցմահ ազատազրկմամբ:

Այդ հանցակազմը ձևական է և ավարտված է համարվում, երբ հայտարարագիր ներկայացնելու մասին պատշաճ ծանուցում ստանալուց հետո՝ օրենքով սահմանված ժամկետում, անձն իր հայտարարագիրը չի ներկայացնում: Որպես սանկցիա օրենսդիրը այդ հանցանքի համար նախատեսել է 15 օրից մինչև 2 տարի ժամկետով ազատազրկում կամ ցմահ ազատազրկում:

Միևնույն ժամանակ, այն դեպքում, երբ անձը չարամտորեն կներառի կեղծ կամ ամբողջությամբ չի ներկայացնի հայտարարագրման ենթակա տվյալներ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով կենթարկվի այն նույն պատժատեսակին, ինչ նախատեսված է ապօրինի հարստացման հանցակազմի համար:

Նշենք նաև, որ Արգենտինայի Հանրապետությունում ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների առկայության պարզմամբ զբաղվում է Հակակոռուպցիոն գործակալությունը: Վերջինս վարչական մարմին է, որն օժտված է քննչական

իրավասություններով, մշակել է բոլոր հանրային ծառայողների ֆինանսական բացահայտման հրապարակային մի համակարգ, որն օգտագործվում է հանրային ծառայողներին վերահսկելու համար²⁴:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ սուբյեկտներ են ոչ միայն հենց պետական պաշտոն զբաղեցնող անձինք, այլ նաև պետական համակարգում աշխատող պաշտոն չզբաղեցնող անձինք: Սա ևս ընդունելի մոտեցում է, քանի որ նման աշխատակիցները կարող են կոռուպցիոն ռիսկեր պարունակող աշխատանքներ կատարել:

3.2 Բրազիլիայի Հանրապետություն

Բրազիլիան նույնպես միացել է ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային: Վերջինս ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 9–ին, իսկ վավերացվել 2005 թվականի հունիսի 15–ի:

Ի համեմատություն այլ պետությունների, Բրազիլիայում ապօրինի հարստացումը գործում է վարչաիրավական, այլ ոչ թե քրեաիրավական հարթությունում:

Այսպես, ապօրինի հարստացումը որպես վարչական իրավախախտում Բրազիլիայում նախատեսվել է դեռևս 2002 թվականին՝ մինչ ՄԱԿ–ի կոնվենցիային միանալը: Բրազիլիայի Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենքում այն ձևակերված է հետևյալ կերպ. «Իր կամ երրորդ անձի համար ապահովել ցանկացած բնույթի ակտիվներ պետական պաշտոն զբաղեցնելու ընթացքում, որի ընդհանուր արժեքը անհամաչափ է պետական պաշտոնատար անձի անցյալ կամ ներկա հայտարարագրված եկամտին և վաստակին»²⁵:

Հարկ է նշել, որ ապօրինի հարստացումը որպես վարչական իրավախախտում գրեթե որևէ երկրում նախատեսված չէ, բացի Բրազիլիայից:

²⁴ St' u Comparative Evaluation of Unexplained Wealth Orders, Booz Allen Hamilton, Table d.

²⁵ St' u Law no. 8429 of 2 June 1992, Article 9, Section VII of the Law of Administrative Improbity, defines illicit enrichment as “to secure for oneself or a third party, in the performance of a public office, position, post, or function, assets of any nature, the total value of which is disproportionate to the public official’s past or present declared income or earnings.”

Ներկայումս Բրազիլիայի Հանրապետությունում քննարկվում է ապօրինի հարստացումը վարչաիրավական հարթությունից քրեաիրավական հարթություն տեղափոխելու հարցը²⁶:

3.3 Պերուի Հանրապետություն

Պերուն նույնպես միացել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային: Վերջինս ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ վավերացվել 2004 թվականի նոյեմբերի 16-ին:

Պերուի Հանրապետությունում ապօրինի հարստացումը նախատեսվել է քրեաիրավական հարթությունում:

Այսպես, ըստ Պերուի քրեական օրենքի՝ յուրաքանչյուր պաշտոնատար անձ կամ հանրային ծառայող, ով իր գործառույթների իրականացման ընթացքում ապօրինի ավելացնում է իր ակտիվները օրինական վաստակից ավելին և չի կարողանում ողջամտորեն հիմնավորել վերոնշյալ ավելացումը, պետք է պատժվի ոչ պակաս քան 5, ոչ ավել քան 10 տարի ժամկետով ազատազրկմամբ և պաշտոն զբաղեցնելու մշտական արգելքով:

Վերը ներկայացված ձևակերպումից պարզ է դառնում, որ ապօրինի հարստացման հանցակազմի բացակայության ապացուցման բեռը դրված է այդ հանցակազմի սուբյեկտի վրա: Ի դեպ, սուբյեկտ են համարվում նաև այն անձինք, ովքեր պաշտոն են զբաղեցնում ոչ միայն պետական մարմիններում, այլև՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող ձեռնարկություններում:

Պերուի Հանրապետությունում ապօրինի հարստացումը կհամարվի կատարված ծանրացուցիչ հանգամանքներում, եթե պետական պաշտոնատար անձը զբաղեցրել է բարձր պետական պաշտոններ պետական մարմիններում կամ պետությանը սեփականության իրավունքով պատկանող ձեռնարկություններում, կամ նրա նկատմամբ հարուցված է անվստահության (իմպիչմենթի) վարույթ, ապա այդ դեպքում սանկցիան

²⁶ St' u Conference of the States Parties to the United Nations Convention against Corruption, CAC/COSP/IRG/I/1/1/Add.18, էջ 3.

ընդգրկում է ոչ պակաս քան 8, ոչ ավելի քան 18 տարի ժամկետով ազատազրկում և պաշտոն զբաղեցնելու մշտական արգելք:

3.4 Չիլիի Հանրապետություն

Չիլիի Հանրապետությունը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային նույնպես միացել է դեռևս 2003 թվականի դեկտեմբերի 11-ին, իսկ վավերացրել է այդ կոնվենցիան 2006 թվականի սեպտեմբերի 13-ին:

Չիլիում նույնպես նախատեսված է ապօրինի հարստացումը քրեական օրենքի մակարդակով: Այսպես, ցանկացած պետական պաշտոնյա, ով իր պաշտոնավարման ընթացքում ձեռք է բերում իր ակտիվների նշանակալից և ոչ հիմնավորված աճ պետք է պատժվի տուգանքով (հավասար է ակտիվների անօրինական աճին) և ժամանակավոր բացարձակ որակազրկմամբ նվազագույն կամ միջին աստիճաններում:

Դիսպոզիցիայի այդպիսի ձևակերպման պայմաններում՝ ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների ապացուցման բեռը դրված է ոչ թե այդ հանցակազմի սուբյեկտի, այլ քրեական հետապնդման մարմնի վրա: Իսկ նախատեսված սանկցիայից պարզ է դառնում, որ Չիլին որպես պատժամիջոց նախատեսում է տուգանք և որակազրկում՝ զերծ մնալով ազատազրկման պատժատեսակից:

Անձի դրսևորած վարքագիծը որպես ապօրինի հարստացում չի որակվում, եթե վարքագիծը, որն առաջացրել է անօրինական ակտիվների աճ, համապատասխանում է կոռուպցիոն որևէ այլ հանցակազմի հատկանիշներին, որի դեպքում պետք է կիրառվեն այն պատժատեսակները, որոնք նախատեսված են համապատասխան հանցակազմի սանկցիայով:

Չիլիի Քրեական օրենսգրքի 241-րդ հոդվածի համաձայն՝ եթե քրեական գործը սկսում է ոչ պաշտոնական զեկույցով կամ պաշտոնական դիմումով և պետական պաշտոնյան ազատվում է սույն հոդվածով քրեականացնող հոդվածից ..., ապա նա պետք է իրավունք ունենա փոխհատուցում ստանալ նյութական և բարոյական վնասի համար այն անձի կողմից, ով լրացրել է ոչ պաշտոնական զեկույցը կամ պաշտոնական դիմումը:²⁷

²⁷ Chile, 1999, Penal Code, Article 241.

Հարկ է նշել, որ ապօրինի հարստացման քրեականացման վտանգներից մեկն էլ այն է, որ ամերիկյան շատ երկրներում այն օգտագործվում է քաղաքական հաշվեհարդարների համար: Սակայն, վերոնշյալ դրույթը փոխհատուցման վերաբերյալ պաշտպանության երաշխիք է հանդիսանում ոչ միայն քաղաքական հաշվեհարդարներից, այլև՝ այլ չարաշահումներից:

3.5 Պանամայի Հանրապետություն

Պանաման ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիային միացել է 2003 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ վավերացրել է այն 2005 թվականի սեպտեմբերի 23-ին:

Պանամայում նույնպես քրեականացված է ապօրինի հարստացումը: Վերջինիս դիսպոզիցիան ձևակերպված է հետևյալ կերպ. «Ցանկացած հանրային ծառայող, ով անձամբ կամ երրորդ անձի միջոցով օրինական եկամտի համեմատությամբ անհարկի ավելացնում է իր սեփականությունը՝ պաշտոնավարման ընթացքում կամ պաշտոնից ազատվելուց հետո 5 տարվա ընթացքում, որի օրինական ծագումը նա անկարող է ներկայացնել, պատժվում է մինչև 6 տարի ժամկետով ազատազրկմամբ»²⁸:

Վերոգրյալից հետևում է, որ տվյալ հանցակազմի սուբյեկտը համարվում է ցանկացած հանրային ծառայող: Վերջինիս վրա է ընկած նաև հանցակազմի հատկանիշների բացակայության ապացուցման բեռը:

Հատկանշական է այն իրավակարգավորումը, որ ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվության վաղեմության ժամկետը՝ անկախ անցած ժամանակահատվածից, գործողության մեջ է լինում պաշտոնից ազատվելու պահից հետո նաև 5 տարվա ընթացքում: Այդպիսի իրավակարգավորումը խիստ արդարացված է, քանի որ իրավակիրառ պրակտիկայում՝ հաշվի առնելով անցած ժամանակահատվածը հանցանքը կատարելու պահից մինչև պաշտոնաթողության պահը, կարող է անցնել քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետը:

²⁸ See Penal Code of Panama of 2008, Article 345, “Any public servant who, either personally or through a third party, unduly increases their wealth in relation to the legitimate income obtained during the occupation of their post and for up to five years after having left the post, whose lawful provenance they are unable to show, shall be punished with three to six years of imprisonment.”

3.6 ԱՄՆ և Կանադա

Առհասարակ ԱՄՆ-ը ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2003 թվականի դեկտեմբերի 9-ին, իսկ վավերացրել այն 2006 թվականի հոկտեմբերի 30-ին: Իսկ Կանադան ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2004 թվականի մայիսի 21-ին, իսկ վավերացրել այն 2007 թվականի հոկտեմբերի 2-ին:

ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացնելիս՝ Կանադան, ինչպես նաև առհասարակ ԱՄՆ-ը վերապահում են կատարել և զերծ են մնացել ապօրինի հարստացման վերաբերող հողվածք քրեականացնելուց, պատճառաբանելով, որ այն հակասում է Սահմանադրությանը, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի սկզբունքին, քանի որ կոնվենցիայի համաձայն անմեղության ապացուցման պարտականությունը կրում է հանրային ծառայողը:

Ինչպես ԱՄՆ-ն, այնպես էլ Կանադան, միևնույն հիմնավորմամբ վերապահում են կատարել նաև Կոռուպցիայի դեմ պայքարի միջամերիկյան կոնվենցիան վավերացնելիս: Կոնվենցիայի 9-րդ հոդվածը՝ ապօրինի հարստացման քրեականացում նախատեսող, չի վավերացվել ԱՄՆ-ի և Կանադայի կողմից:

4. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄՆ ԱՍԻԱՅՈՒՄ²⁹

4.1 Չինաստանի Հանրապետություն

Չինաստանի Հանրապետությունը եղել է այն պետություններից մեկը, որն առաջիններից է ստորագրել և վավերացրել ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան: Մասնավորապես, այս ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 10-ին, իսկ վավերացվել 2006 թվականի հունվարի 13-ին:

Չինաստանի Հանրապետությունում ապօրինի հարստացման հանցակազմը օրենսդրի կողմից նախատեսված է քրեական օրենսգրքի 395-րդ հոդվածում և ըստ էության համապատասխանում է այդ կոնվենցիայի 20-րդ հոդվածում նախատեսված ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշներին: Այդ հոդվածի դիսպոզիցիան ձևակերպված

²⁹ Ասիական նշված երկրներից բացի, հավելենք, որ Բուրնում և Թայլանդում ապօրինի հարստացումը քրեականացված չէ:

է հետևյալ կերպ. «Երբ պետական պաշտոնատար անձանց ունեցվածքը կամ ծախսերը ակնհայտորեն գերազանցում են նրանց օրինական եկամուտները, երբ տարբերությունը մեծ է, նրանք պարտավոր են պարզաբանել ունեցվածքի աղբյուրը: Երբ պետական պաշտոնյաները չեն կարող բացատրել նրանց ունեցվածքի օրինականությունը, ունեցվածքի այդ մասը պետք է դիտվի որպես անօրինական եկամուտ»:

Հանցակազմի օբյեկտը պետական ապարատի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ սուբյեկտը՝ պետական պաշտոնատար անձը:

Հողվածի դիսպոզիցիայից պարզ է դառնում, որ հանցակազմի հատկաների բացակայության ապացուցման բեռն ընկած է այդ հանցակազմի սուբյեկտի վրա, ինչը համապատասխանում է ՄԱԿ-ի կոնվենցիայի 20-րդ հոդվածի պահանջին:

Նույն հոդվածը որպես ապօրինի հարստացման սանկցիա նախատեսում է ոչ ավելի քան հինգ տարվա ժամկետով ազատազրկումը կամ կալանքը, և օրինական եկամուտը գերազանցող գումարի բռնագրավումը հոգուտ պետության:

Միևնույն ժամանակ, հոդվածում նշվում է հետևյալ պահանջը. «Պետական պաշտոնատար անձինք, որոնք դեպոզիտներ ունեն արտասահմանյան երկրներում պետք է հայտարարագրեն դրանք սահմանված կարգին համապատասխան»: Այդպիսի պահանջի կարևորությունը կայանում է նրանում, որ այն ապահովում է այն նախապայմանը, որի դեպքում միայն կարող է աշխատել ապօրինի հարստացման հանցակազմը:

Իրավական նորմի այդպիսի պահանջը չկատարելու դեպքում քրեական օրենքը որպես հետևանք նախատեսում է հետևյալը. «Նրանք, ովքեր կթաքցնեն դեպոզիտները չհայտարարագրելով դրանք կդատապարտվեն հստակ ժամկետով ոչ ավելի քան երկու տարվա ազատազրկման կամ կալանքի, երբ հանգամանքներն այդքան լուրջ չեն, նրանք պետք է ենթարկվեն վարչական պատասխանատվության, այն մարմնի կողմից, որին նրանք պատկանում են կամ հանգամանքին համապատասխան ավելի բարձր մակարդակի պատկան մարմնի կողմից»³⁰:

³⁰ Տե՛ս 1979 թվականին ընդունված Չինաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը <http://www.fmprc.gov.cn/ce/cgvienna/eng/dbtyw/jdwt/crimelaw/t209043.htm>

Ինչ վերաբերվում է ապօրինի հարստացման հանցակազմի քննչական ենթակայությանը, ապա այն կարգավորվում է Չինաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով: Վերջինիս 18-րդ հոդվածի համաձայն սահմանված է. «(...) կաշառակերության, պետական պաշտոնյաների կողմից իրենց ծառայողական պարտականությունների խախտման, և քաղաքացիների անձնական իրավունքների խախտման հետ կապված հանցագործությունները, (...), որոնք խախտում են քաղաքացիների ժողովրդավարական իրավունքները, որոնք կատարվել են պետական պաշտոնատար անձանց մասնակցությամբ նրանց լիազորությունների և ազդեցության գործադրման արդյունքում՝ պետք է քննվեն ժողովրդական դատախազությունների կողմից: Մասնավոր դատաքննության գործերը պետք է ուղղակիորեն քննվեն ժողովրդական դատարանների կողմից»³¹:

4.2 Ինդոնեզիայի Հանրապետություն

Ինդոնեզիայի Հանրապետությունը նույնպես եղել է այն պետություններից մեկը, որն առաջիններից է ստորագրել և վավերացրել ՄԱԿ–ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան: Մասնավորապես, այն ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 18–ին, իսկ վավերացվել 2006 թվականի սեպտեմբերի 19–ին:

Ինդոնեզիայում որպես այդպիսին նույնպես նախատեսված է ապօրինի հարստացման հանցակազմը, սակայն ոչ այն հատկանիշներով, որոնք բնորոշ են ՄԱԿ–ի կոնվենցիայի 20–րդ հոդվածի ներքո նախատեսված ապօրինի հարստացմանը:

1999թ. Հակակոռուպցիոն օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ապօրինի հարստացած ցանկացած անձ, ով հարստացրել է իրեն և/կամ այլ անձանց կամ ընկերությանը՝ վնաս պատճառելով պետության ֆինանսական համակարգին կամ տնտեսությանը, պետք է դատապարտվի ցմահ ազատազրկման 4-ից 20 տարի ժամկետով ազատազրկման և 200 միլիոնից մեկ միլիարդ թուպի (մոտ 15.000-76.000 ԱՄՆ դոլար) տուգանքի: Նույն հոդվածը նախատեսում է, որ այդ հանցանքի համար որպես սանկցիա կարող է կիրառվել ընդհուպ մահապատիժ:

³¹ Տե՛ս <http://www.cecc.gov/resources/legal-provisions/criminal-procedure-law-of-the-peoples-republic-of-china#1.2>

Վերը ներկայացված հատկանիշներից պարզ է դառնում, որ ապօրինի հարստացման հանցակազմի սուբյեկտ կարող է լինել ոչ թե պաշտոնատար անձը, այլ առհասարակ յուրաքանչյուր անձ: Վերջինս վկայում է այն մասին, որ Բնդոնեզիայի Հանրապետությունում ապօրինի հարստացման հանցակազմը բավականին ընդգրկուն է՝ առանց հատուկ սուբյեկտի սահմանման:

Միևնույն ժամանակ, ուշագրավ է բավականին խիստ սանկցիայի առկայությունը: Սակայն, հանցակազմի էլակետային թերությունը կայանում է նրանում, որ վերջինիս հատկանիշների ապացուցման բեռը դրված է քրեական հետապնդման մարմինների վրա, ինչն ինքնին չի համապատասխանում ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի 20-րդ հոդվածի պահանջին: Այդ է վկայում նա» Բնդոնեզիայի քրեական դատավարության օրենսգրքի 66-րդ հոդվածը, որի համաձայն կասկածյալը կամ մեղադրյալը չի կրում ապացուցման բեռը³²:

Միևնույն ժամանակ, հակակոռուպցիոն օրենքի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ ապացուցման բեռի վերագրյալ կանոնը բացարձակ չէ: Մասնավորապես, օրենքի 28-րդ հոդվածը նախատեսում է ապացուցման բեռի տեղափոխում, որի հետ կապված մեղադրյալից կարող է պահանջվել տեղեկություններ հաղորդել իր ամբողջ գույքի, ամուսնու կամ կնոջ, երեխաների գույքի և յուրաքանչյուր անձի գույքի վերաբերյալ, որը կասկածվում է այդ օրենքով սահմանված հանցագործության արդյունքում ունեցվածք ձևավորելու մեջ:

Հատկանշական են նաև օրենքի 18-19-րդ հոդվածները, որոնք նախատեսում են ցանկացած գույքի բռնագրավում, որը հանդիսացել է կոռուպցիոն հանցագործության առարկա կամ օգտագործվել է հանցագործություն կատարելիս: «Գույք» եզրույթի հասկացությունը օրենքով չի տրվում, սակայն 18-րդ հոդվածի 1-ին մասը թույլատրում է շարժական և անշարժ գույքի բռնագրավում կամ անշարժ գույքի, որը օգտագործվել է կոռուպցիայի համար կամ ստացվել է կոռուպցիայի արդյունքում³³:

³² Տե՛ս

https://www.unodc.org/res/cld/document/idn/law_number_8_year_1981_concerning_the_criminal_procedure_html/I_2_Criminal_Procedure.pdf

³³ Տե՛ս http://publicofficialsfinancialdisclosure.worldbank.org/sites/fdl/files/assets/law-library-files/Indonesia_Corruption%20Eradication%20Law_1999_en.pdf

4.3 Ճապոնիայի Հանրապետություն

Ճանապոհիայի Հանրապետությունը այն եզակի պետություններից մեկն է, որը 2003 թվականի դեկտեմբերի 9-ին ստորագրել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան, սակայն այդպես էլ չի վավերացրել այն մինչ օրս:

Ծագող արևի երկրում ապօրինի հարստացումը նույնպես քրեականացված չէ: Սակայն, հանրային ծառայողների ձեռք բերված նվերների հայտարարագրման պահանջ սահմանված է օրենքի մակարդակով:

Այսպես, Ճապոնիայի 1999թ. ընդունված «Ազգային հանրային ծառայության էթիկայի մասին» օրենքի համաձայն՝ գլխավոր հանրային ծառայողները պետք է հայտարարագրեն նվերները, որոնք գերազանցում են 5,000 յենը (մոտավորապես 45 ԱՄՆ դոլար), արժեթղթերը, գործարքները և եկամուտը, որոնք գերազանցում են 1,000,000 յենը (մոտավորապես 9,400 ԱՄՆ դոլար)³⁴:

4.4 Մալազիա

Մալազիան ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2003 թվականի դեկտեմբերի 9-ին, սակայն վավերացրել է այն բավականին ուշ՝ 2008 թվականի սեպտեմբերի 24-ին:

1997 թվականի Մալազիայի «Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքի 32-րդ հոդվածում ամրագրվել է ապօրինի հարստացումը հետևյալ կերպ.

«Եթե դատախազը ինելամիտ հիմքեր ունի կարծելու, որ ցանկացած պետական մարմնի պաշտոնատար անձ սեփականության իրավունքով ունի կամ տիրապետում է կամ մասնաբաժին ունի որևէ գույքի նկատմամբ, և այդ փաստն անհամաչափ է՝ հաշվի առնելով նրա ներկա և անցյալ եկամուտն ու այլ հանգամանքները, ապա դատախազն իրավասու է գրավոր կերպով պահանջել, որ պաշտոնյան երդման բացատրություն ներկայացնի, թե ինչպես է նա կարողացել սեփականության իրավունքով ունենալ կամ տիրապետել կամ մասնաբաժին ունենալ գույքի նկատմամբ, և եթե նա չկարողացավ բավարար կերպով բացատրել անհամաչափությունը, ապա համարվում է մեղավոր և դատապարտվելու

³⁴ Տե՛ս <http://www.cas.go.jp/jp/seisaku/hourei/data/npsea.pdf>

դեպքում կենթարկվի /ա/ ազատագրկման՝ 14 օրից մինչև 20 տարվա ժամկետով և /բ/ տուգանքի՝ ավելցուկի հինգնապատկով /եթե հնարավոր է չափել ավելցուկը/ կամ RM 20,000 /ringgit/ էլնելով այն հանգամանքից, թե որն է ավելի մեծ»:

Վերոհիշյալ իրավանորմից պարզ է դառնում, որ Մալազիայում ապօրինի հարստացման հատկանիշների բացակայությունը ապացուցելու պարտականությունը կրում է ապօրինի հարստացման հասցեատերը՝ սուբյեկտը: Այսինքն, ապօրինի հարստացման անմեղության ապացուցման բեռը դրվում է մեղադրյալի վրա:

«Կոռուպցիայի դեմ պայքարի մասին» օրենքի 36-րդ հոդվածի համաձայն հանցագործության կատարման համար ցանկացած դատաքննության ժամանակ այդ օրենքին համապատասխան դատարանը որոշում է կայացնում հանցագործության առարկա հանդիսացող գույքի բռնագրավման վերաբերյալ:

4.7 Լիբանան

Լիբանանն առհասարակ չի ստորագրել և վավերացրել ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, սակայն դեռևս 1999 թվականին ընդունված օրենքի ուժով քրեականացրել է ապօրինի հարստացումը: Թիվ 154 օրենքի 1-ին հոդվածը ապօրինի հարստացումը բնորոշվում է որպես միջոցներ, որոնք ձեռք են բերվել ապօրինի հարստացման եղանակով՝ աշխատողի, հանրային ծառայություն մատուցողի, դատավորի, կամ նրանց բարեկամների կամ գործընկերների կամ նրանց կողմից, ովքեր օգտագործում են նրանց անունները, արդյունքում ստանալով կաշառք, ազդեցություն կամ աշխատանքի շահագործում:

Որպես ապօրինի հարստացում է դիտվում նաև մրցույթների հաղթելը կամ ներմուծման-արտահանման արտոնագրերի ստացումը, եթե դրանց արդյունքում ձեռք բերված հարստացումը տեղի է ունեցել անօրինական ճանապարհով: Ապօրինի հարստացում է նաև, պետական միջոցների օգտագործումը անշարժ կամ շարժական գույքի ձեռքբերման կամ դրանց արժեքի բարձրացման համար, անձանցից, որոնք օրենքով ներառված են գնումների գործընթացում հիմնվելով այդ անձանց աշխատանքի ընթացքում ստացված նախնական տեղեկատվության հիման վրա:

Օրենքի 2-րդ հոդվածը որպես աշխատող բնորոշում է այն անձանց, որոնք անգամ կես դրույքով աշխատում են նախարարություններում, հանրային գործակալություններում, բանակում, անվտանգության ուժերում, կամ ՏԻՄ-ում:

Հանրային ծառայություններ մատուցող է համարվում ցանկացած անձ, ով ընտրվել է կամ նշանակվել է որպես Հանրապետության նախագահ, Խորհրդարանի նախագահ կամ վարչապետ, ինչպես նաև նախարարները, պատգամավորները, քաղաքապետերը, ավագանիների անդամները, նոտարները, վարչական կոմիտեների անդամները, էթե առնչվում են ֆինանսների հետ: Այդ կատեգորիայի մեջ են մտնում նաև պետական խառը տնտեսական ընկերությունները, հանրային մարմինների մենեջերները, դատավորները, ֆինանսների նախարարության և մաքսային ծառայության աշխատակիցները, բանակի և անվտանգության ծառայության աշխատակիցները:

Յուրաքանչյուր դատավոր, երրորդ կարգի և ավելի բարձր ծառայող, բանակի կամ անվտանգության յուրաքանչյուր ծառայող պետք է նշանակումից հետո մեկ ամսվա ընթացքում որպես պարտականությունները ստանձնելու նախապայման ներկայացնի ստորագրված հայտարարագիր, որը արտացոլում է իր, ամուսնու/կնոջ և փոքր երեխաների շարժական կամ անշարժ գույքը:

4-րդ հոդվածը նախատեսում է, որ բոլոր վերոգրյալ անձինք պետք է իրենց ծառայությունը ավարտելուց հետո երկամսյա ժամկետում ներկայացնեն երկրորդ հայտարարագիրը, որը կարտացոլի իրենց, ներառյալ ամուսնու/կնոջ, փոքր երեխաների, ունեցվածքը, ինչպես Լիբանանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: 6-րդ հոդվածը նախատեսում է հայտարարագրերի ներկայացման ընթացակարգը: 7-րդ հոդվածի համաձայն ցանկացած այն դատավորը կամ ծառայողը, որը չի ներկայացրել իր ֆինանսական հայտարարագիրը մեկ ամսվա ընթացքում կարող է ազատվել զբաղեցրած պաշտոնից:

Որևէ աշխատակից կամ դատավոր չի ստանա կենսաթոշակ կամ արձակման նպաստ, եթե չի ներկայացնի երկրորդ հայտարարագիրը: 15-րդ հոդվածը նախատեսում է համապատասխան մարմնի ստեղծում, որը կոչվում է Քննության և ուղղորդման մարմին և բաղկացած է 3 առաջնային դատավորներից և 3 փոխարինող դատավորներից, ինչպես նաև ներառում է քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահին և կենտրոնական տեսչության ղեկավարին: Մարմինը կարող է քննության իրականացման ժամանակ արգելանք կիրառել կասկածյալի շարժական և անշարժ գույքի նկատմամբ, կանխելով դրա դուրս բերումը երկրից: Հանձնաժողովն իրավունք ունի գործի քննությանը վերաբերող տեղեկատվություն հայցել հանրային և մասնավոր կազմակերպություններից, ներառյալ հաշիվների վերաբերյալ բանկային գաղտնիք հանդիսացող:

Ապօրինի հարստացման ապացույց է աշխատակցի ունեցվածքի առկայությունը, որը նա չէր կարող ձևավորել իր օրինական եկամտի հաշվին, կամ նրա ապրելակերպն է, որն ամհամատեղելի է նրա ֆինանսական ռեսուրսների հետ, կամ առկա նյութական վիճակի արագ շեշտակի բարելավումն է: Քննությունը կարող է իրականացվել նաև եթե ծառայությունն արդեն ավարտվել է: Ծառայողի մահվան դեպքում ժառանգների նկատմամբ տարվում է միայն ֆինանսական մասով քննություն: Եթե կազմակերպությունը լուծարվում է և եթե որևէ մեկը, ով ապօրինի հարստացել է հիմնադրում է այլ իրավաբանական անձ, ապա քննությունը շարունակվում է:

22-րդ հոդվածի համաձայն ապօրինի հարստացման մեջ մեղավոր ճանաչված անձը դատապարտվում է 3-ից 7 տարվա ազատազրկման և վճարում է տուգանք 20-100 միլիոն լիբանյանյան ֆունտի (մոտ 13.000-67.000 ԱՄՆ դոլար) տուգանք: Նույն դրույթը վերաբերում է գործընկերներին, որոնք առնչվում են հանցագործությանը: 23-րդ հոդվածը սահմանում է, որ ապօրինի հարստացումից տուժած կողմը կարող է ստանալ հատուցում ամբողջ վնասի չափով³⁵:

5. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄՆ ՕՎԿԻԱՆԻԱՅՈՒՄ

5.1 Նոր Զելանդիա

Նոր Զելանդիան բոլորովին վերջերս է միացել ՄԱԿ-ի կոռուպցիայի կոնվենցիային: Այսպես, չնայած, որ կոնվենցիան ստորագրվել է 2003 թվականի դեկտեմբերի 10-ին, սակայն այն վավերացվել է 2015 թվականի դեկտեմբերի 1-ին:

Նոր Զելանդիան ապօրինի հարստացումը որպես քրեական հանցանք դեռևս չի նախատեսում իր օրենսդրությամբ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ Նոր Զելանդիայում կոռուպցիայի մակարդակը ցածր է, այն հակակոռուպցիոն ցուցիչի համաձայն աշխարհում 4-րդ տեղում է գտնվում³⁶:

Այնուամենայնիվ, 2009թ. ընդունված «Եկամուտների քաղաքացիական կարգով վերականգնման մասին» օրենդրական ակտը նախատեսում է՝ դատապարտման վրա հիմնված հանցագործության գործիքների, ակտիվների բռնագրավում:

³⁵ Տե՛ս <http://www.undp-aciac.org/resources/ac/newsDetails.aspx?nid=914>

³⁶Տե՛ս <http://www.transparency.org/cpi2015>

5.1 Ավստրալիա

Ավստրալիան ստորագրել է ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան դեռևս 2003 թվականի դեկտեմբերի 9-ին, իսկ վավերացրել է այն 2005 թվականի դեկտեմբերի 7-ին:

Ավստրալիայում ապօրինի հարստացումը զետեղվել է «անհիմն հարստություն» եզրաբանության ներքո ³⁷ : Ավստրալիայում, թեև անհիմն հարստացման պատժի գաղափարը ներդրվել էր Արևելյան Ավստրալիայի և Ավստրալիայի հյուսիսային մասերում գործող օրենսդրությամբ, սակայն, բացակայում էր «Հանցագործություններից ստացված եկամուտների մասին» դաշնային օրենքում ³⁸ : Վերջինս, թեև ուժի մեջ էր մտել 2002 թվականին, բայց դրա գործողությունը սկսել է տարածվել աստիճանաբար ³⁹ : 2010 թվականին վերոնշյալ օրենքում վերջապես կատարվեցին անհրաժեշտ փոփոխությունները՝ ճանաչելով անհիմն հարստացումը իբրև հանցանք:

Անհիմն հարստացումը սահմանված է որպես անձի հարստության ընդհանուր արժեքի և իր օրինական ճանապարհով ձեռք բերված եկամտի տարբերություն:

Հարկ է նշել, որ Ավստրալիայի օրենսդրությամբ հանցանքի սուբյեկտներ ոչ թե պետական պաշտոնյաները, այլ՝ յուրաքանչյուր անձ: Այստեղ էլ հանցանքի հատկանիշների բացակայության ապացուցման բեռը դրվում է սուբյեկտի վրա⁴⁰:

6. ԱՊՕՐԻՆԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

6.1 Բոտսվանայի Հանրապետություն

Բոտսվանայի Հանրապետությունը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան վավերացրել է 2011 թվականի հունիսի 27-ին:

Սակայն, Բոտսվանայում քրեականացրել է ապօրինի հարստացումը դեռևս 1994թ.-ին «Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների մասին» օրենքով: Այս օրենքով ստեղծվել է մի նոր մարմին՝ Կոռուպցիայի և տնտեսական հանցագործությունների

³⁷ Տե՛ս Unexplained wealth.

³⁸ Տե՛ս Proceeds of Crime Act enacted in 2001, amended in 2010,

³⁹Տե՛ս On the Take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias Tammar Berger p. 36

⁴⁰Տե՛ս Comparative Evaluation of Unexplained Wealth Orders, Booz Allen Hamilton, January 2012, Appendix A, Table a.

տնօրինություն, որն ունի հետաքննության, ձերբակալման, որոնման և բռնագրավման իրավագործություններ ⁴¹ : Տնօրենը կարող է տեղեկություններ ստանալ կամ հետաքննություն իրականացնել ցանկացած ենթադրյալ կամ կասկածվող իրավախախտման վերաբերյալ, պահանջել գրառումներ հանրային կամ մասնավոր գործակալություններից, ազատագրել ցանկացած անձի, եթե տնօրենը ողջամտորեն հավատում է, որ տվյալ անձն իրավախախտում է իրականացրել:

Տնօրենը կամ տնօրինության որևէ աշխատակից, ով գրավոր լիազորված է տնօրենի կողմից, կարող է քրեական հետապնդում նախաձեռնել ցանկացած անձի նկատմամբ, երբ առկա են հիմքեր ենթադրելու, որ անձը (ա) վարում է ավելի բարձր, քան իր ներկա կամ անցյալ հայտնի աղբյուրներից ստացված եկամտին կամ ակտիվներին համաչափ ապրելաձև, կամ (բ) ղեկավարում կամ տիրապետում է նյութական ռեսուրսներ, որոնք անհամաչափ են իր ներկա կամ անցյալ հայտնի աղբյուրներից ստացված եկամտին կամ ակտիվներին:

Անձը մեղավոր է հանցանքի կատարման մեջ, եթե նա չի կարողանում տնօրենին կամ հետաքննությունն իրականացնող պաշտոնյային ներկայացնել բավարար բացատրություն, թե ինչպե՞ս են այսպիսի դրամական ռեսուրսները կամ գույքը անցել իր ղեկավարման կամ տիրապետման տակ:

Բոտսվանայի օրենսդրությունը նախատեսում է ապօրինի հարստացման ավելի բարձր շեմ, քանի որ ապօրինի հարստացման հանցակազմով է նաև որակվում ապօրինի հարստացման շնորհիվ ձեռք բերված գույքը կամ դրամական միջոցները «նվերի կամ փոխառության» շղարշի տակ այլ անձի հանձնելը, որի դեպքում մեղադրյալը փաստացի չի ազատում պատասխանատվությունից, քանի որ գույքը դեռևս շարունակվում է համարվել նրանը:

Բոտսվանայում ապօրինի հարստացման հատկանիշների բացակայության ապացուցման բեռը հստակ դրված է պետական պաշտոնատար անձի վրա: Վերջինս ոչ միայն պետք է ապացուցի, որ օրինական ճանապարհով է ձեռք բերել, այլև իր

⁴¹ St' u Comparative Evaluation of Unexplained Wealth Orders, Booz Allen Hamilton, January 2012, Appendix A, Table d.

մեղավորությունը հաստատված համարելուց հետո պետք է նաև ապացուցվի, որ տրված նվերները և փոխառությունները շինծու չեն:

6.2 Եզիպտոսի Հանրապետություն

Եզիպտոսը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիան ստորագրել է 2003 թվականի դեկտեմբերի 9-ին, իսկ վավերացրել 2005 թվականի փետրվարի 25-ին:

Սակայն, Եզիպտոսում ապօրինի հարստացման վերաբերյալ օրենքն ընդունվել է դեռևս 1975 թվականին: Թիվ 62 օրենքի 2-րդ հոդվածը նախատեսում է, որ ցանկացած անձի կողմից ձեռքբերված ունեցվածքն ընկնում է այդ օրենքի գործողության ներքո, այդ թվում՝ ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված չարաշահումները կամ վարքագիծը, որոնք հակասում են քրեկան օրենսգրքին կամ հանրային բարքերին դիտվում են որպես ապօրինի հարստացում:

Հատկանշական է նաև այն, որ օրենքը որպես ապօրինի հարստացման դրսևորում է դիտարկում նաև բարեկեցության աճը, որը տեղի է ունեցել պաշտոնը ստանալուց հետո, եթե դա իրավախախտման կամ վատ վարքի արդյունք է, հատկապես եթե այդպիսի աճը պայմանավորված չէ իրենց օրինական եկամուտներով և նրանք չեն կարող ապացուցել դրանց օրինականությունը:

Որպես սանկցիա՝ օրենքի 18-րդ հոդվածը որպես սանկցիա սահմանում է 3-15 տարի ժամկետով ազատազրկում Եզիպտոսի քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածով սահմանված կարգով, և տուգանք ապօրինի հաստացմանը համարժեք չափով⁴²:

⁴² Տե՛ս <https://www.ncjrs.gov/pdffiles1/nij/grants/237163.pdf>

ԳԼՈՒԽ II. ԲԱՐՁՐԱՍՏԻՃԱՆ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ

ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայտարարագրման օրենսդրական հիմքեր. Նախապատմություն

Ի սկզբանե, ՀՀ-ում հայտարարագրերի իրավական կարգավորումը տրված էր 2001թ.-ի «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքով և «ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների ու նրանց փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի ձևերը, դրանց լրացման և պահպանման կարգերը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2002 թվականի N 27 որոշմամբ:

«ՀՀ իշխանության մարմինների ղեկավար աշխատողների գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածը սահմանում էր գույքի և եկամուտների հայտարարագիր ներկայացնող պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձանց շրջանակը:

Սակայն, 2006 թվականին վերոնշյալ օրենքն ուժը կորցրած ճանաչվեց, որի արդյունքում ընդունվեց «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքը: Նոր օրենքն արդեն ոչ թե սահմանում էր հստակ ցանկ, այլ նշում, որ հայտարարատու է համարվում՝ 1) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտը՝ Հայաստանի Հանրապետությունում եւ (կամ) Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս սեփականության իրավունքով իրեն պատկանող սույն օրենքով սահմանված գույք եւ (կամ) եկամուտ ունենալու դեպքում, 2) ոչ ռեզիդենտը՝ Հայաստանի Հանրապետությունում սեփականության իրավունքով իրեն պատկանող սույն օրենքով սահմանված գույք ունենալու եւ (կամ) եկամուտ ստանալու դեպքում:

Այսինքն, ի տարբերություն նախկին իրավական կարգավորման, նոր իրավական ակտը գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացումը չէր պայմանավորում անձի պաշտոնատար անձ լինելու հանգամանքով:

Այնուհետև, 2008 թվականի սեպտեմբերի 4-ին ընդունվեց «Ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ

կառավարության N 1038-Ն նոր որոշումը, որն էլ ուժը կորցրած ճանաչեց նաև վերոնշյալ 2002 թվականի ՀՀ Կառավարության որոշումը⁴³:

Իսկ 2012 թվականին ընդունված «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը կրկին ուժը կորցրած ճանաչեց «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» 2006 թվականի ՀՀ օրենքը: Արդյունքում, գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացումը կրկին պայմանավորվեց Բարձրաստիճան պաշտոնատար անձ լինելու հանգամանքով:

Ներկայումս, ՀՀ օրենսդրությամբ շահերի բախման, գույքի և եկամուտների հայտարարագրեր ներկայացնելու և դրան վերաբերող իրավակարգավորումները նախատեսված են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 7-րդ գլխով:

Իսկ Բարձրաստիճան պաշտոնատար անձի և փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի օրինակելի ձևերը կարգավորվում են ՀՀ կառավարության N 1819-Ն որոշմամբ⁴⁴:

Բարձրաստիճան պաշտոնատար անձի և փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների մասին հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների ցանկը, բովանդակությունը և ձևը կարգավորվում են ՀՀ կառավարության N 1835-Ն որոշմամբ⁴⁵:

⁴³ Տե՛ս «Ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1038-Ն

⁴⁴ Տե՛ս «Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի, հարկային տարվա՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող գույքի և եկամուտների հայտարարագրի ու բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1819-Ն որոշում, ՀՀ կառավարություն, 2011 թվականի դեկտեմբերի 15:

⁴⁵ Տե՛ս «Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի, հարկային տարվա՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող գույքի և եկամուտների հայտարարագրի ու բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1819-Ն որոշում, ՀՀ կառավարություն, 2012 թվականի դեկտեմբերի 15:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածից պարզ է դառնում, որ բարձրաստիճան պաշտոնատար անձինք հայտարարագիր են ներկայացնում՝ պաշտոնը ստանձնելիս, պաշտոնը դադարեցնելիս և ամեն տարի՝ նախորդ տարվա վերաբերյալ⁴⁶:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածից բխում է, որ հայտարարագրեր ներկայացնող սուբյեկտներն են բարձրաստիճան պաշտոնատար անձը, բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը:

Վերոնշյալ օրենքի 5-րդ հոդվածի 15-րդ կետով տրվում է այն պաշտոնատար անձանց շրջանակը, որոնք համարվում են բարձրաստիճան:

Առկա խնդիրներ

Հարց է առաջանում, թե ինչու՞ է սահմանափակվել հայտարարագրեր ներկայացնելու պարտավորություն ունեցող անձանց շրջանակը: Տրվում են հետևյալ հիմնավորումները:

Դա պայմանավորված է ռեսուրսների պակասով, քանի որ ներկայումս առկա են 600 բարձրաստիճան պաշտոնատար անձինք, և իրենց ընտանիքի անդամների հետ համատեղ կազմում են 2000 անձ, իսկ վերահսկող մարմինը՝ ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը բաղկացած է 5 անդամներից: Բացի այդ նախկին կարգավորումը իրականացվում էր առանց ստուգման, հետևաբար՝ չէր արդարացնում իրեն: Ինչպես նաև օրենսդիրը գտնում է, որ ցածրաստիճան պաշտոնատար անձինք չունեն որոշումներ ընդունելու բավարար կարողություններ և նախ անհրաժեշտ է կենտրոնանալ բարձրաստիճան պաշտոնատար անձանց վրա, միայն հետո՝ ցածրաստիճան:

Սակայն մենք գտնում ենք, որ այդպիսի մոտեցումն արդարացի չէ: Քանի որ հայտարարագրերի նկատմամբ վերահսկողություն իրականացվում է ոչ միայն մի մարմնի կողմից, հայտարարագրերը արդյունավետ են նաև բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետաքննելիս, նույնիսկ չստուգված հայտարարագրերն ունեն կանխարգելիչ նշանակություն:

⁴⁶ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, 33-րդ հոդված

Երևանի 12 վարչական շրջանների ղեկավարներն ընդգրկված չեն հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքում: Մինչդեռ, 9 վարչական շրջան ունի ավելի քան 50,00 բնակիչ, որից 7-ը՝ ավելի քան 100,000:

Բացի այդ, քանի որ ՀՀ քննչական կոմիտեն ստեղծվել է ավելի ուշ, քան օրենքով նախատեսվել է հայտարարագրեր ներկայացնելու պարտադիր պահանջ ունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձանց ցանկը, հետևաբար ղեկավար աշխատակազմը դուրս է մնացել այդ ցանկից⁴⁷:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձինք սահմանվում են հետևյալ կերպ.«Բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա ամուսնու հետ՝ ներառյալ մինչև 2-րդ աստիճանի արյունակցական կապի մեջ գտնվող անձինք: Բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի մինչև 2-րդ աստիճանի մեջ են գտնվում արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք, ինչպես նաև վերջիններիս հետ արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող անձինք: Արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ են գտնվում անձի զավակները, ծնողները, քույրերը և եղբայրները»:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն բարձրաստիճան պաշտոնատար անձինք այդ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում փոխկապակցված անձանց մասին հայտարարագիր:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը այդ օրենքով բարձրաստիճան պաշտոնատար անձի համար սահմանված դեպքերում և կարգով բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով են ներկայացնում իրենց գույքի և եկամուտների հայտարարագիրը:

Քանի որ օրենքը չի սահմանում 2-րդ մասի կիրառելիության դեպքերը, միայն նշում է 36-րդ հոդվածում փոխկապակցված անձանց մասին հայտարարագրի բովանդակությունը, հոդվածի տրամաբանությունից բխում է, որ հայտարարագրեր

⁴⁷ Տե՛ս Financial Supervision of Public Officials, էջ 5, կետ3.3.

ներկայացնող սուբյեկտներն են բարձրաստիճան պաշտոնատար անձր, բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսինը, նրա հետ համատեղ ապրող ծնողը, ինչպես նաև համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակը:

Հետևաբար հարց է առաջանում, ինչու՞ ներառված չեն առնվազն արյունակցական կապի 1-ին աստիճանի մեջ գտնվող հետևյալ սուբյեկտները՝

- անչափահաս զավակները,
- համատեղ ապրող ամուսնացած զավակները⁴⁸:

Կարծում ենք, որ նախընտրելի կլիներ առհասակ ընլայնել հայտարարագիր ներկայացնող սուբյեկտների շարքը՝ ընդհուպ մինչև արյունակցական կապի 2-րդ աստիճանը: Առաջարկությունը պայմանավորված է այն հանգամանքով, որպեսզի կանխվի ողջամտորեն հնարավոր այն իրավունքի չարաշահումը, երբ պաշտոնատար անձն իր ունեցվածքը հայտարարագրում կներկայացնի ոչ թե որպես իր, այլ իր հետ փոխկապակցված անձի ունեցվածք: Ինչպես նաև, կարծում ենք անհրաժեշտ է ներառել վերը նշված սուբյեկտներին՝ անչափահաս և համատեղ ապրող ամուսնացած զավակներին:

Ամենամյա հայտարարագիր բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից ներկայացվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

Ամենամյա հայտարարագիր բարձրաստիճան պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից ներկայացվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ ոչ ուշ, քան տվյալ տարվան հաջորդող տարվա փետրվարի 15-ը:

Պաշտոնը ստանձնելիս և պաշտոնը դադարեցնելիս հայտարարագիր ներկայացվում է բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից ստանձնելու, դադարեցնելու օրվա դրությամբ այդ օրերին հաջորդող 15 օրվա ընթացքում:

Հարց է առաջանում, ինչու՞ պաշտոնը ստանձնելիս և պաշտոնը դադարեցնելիս բարձրաստիճան պաշտոնատար անձի ընտանիքի անդամների կողմից հայտարարագիր չի ներկայացվում⁴⁹:

⁴⁸ Տե՛ս Financial Supervision of Public Officials, էջ 7, կետ 3.3.

⁴⁹ Տե՛ս Financial Supervision of Public Officials, էջ 7, կետ 3.4.

Կարծում ենք, որ այդ օրենսդրական բացը ենթակա է վերացման, քանի որ եթե օրենսդիրն առհասարակ սահմանել է պարտականություն՝ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի ներկայացման վերաբերյալ, որպեսզի իրականացնի վերահսկողություն օրինականության ապահովման և կոռուպցիայի հաղթահարման նպատակով, ապա կարծում ենք, որ վերջիններիս կողմից հայտարարագրի ներկայացման հաճախականությունը պետք է լինի նույնն ինչ պաշտոնատար անձի համար: Հակառակ պարագայում, օրինականության նկատմամբ վերահսկողությունը կլինի պատրանքային և վերացական:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով այնպիսի ծախսերը, որոնք ակտիվներ չեն, չեն հայտարարագրվում, օր.՝ արձակուրդները, ճանապարհորդությունները⁵⁰: Արժեթղթերը, դրամական միջոցները հայտարարագրելիս բնութագրիչ հատկանիշները ներկայացնելու պահանջ չկա⁵¹: Բացի այդ, գործող օրենսդրությամբ ձեռնարկատիրական գործունեության որոշ ոլորտներ չեն կարգավորվում, ինչպես օր.՝ հողագործությունը: Հետևաբար, պաշտոնյան կարող է հայտարարագրում նշել, որ իր եկամուտը գալիս է հողագործությունից, և դժվար կլինի ստուգել այն⁵²:

Բացի այդ, օրենքը չի պահանջում ներկայացնել շահերի հայտարարագրեր:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն շահերի բախումը՝ իրավիճակ է, երբ բարձրաստիճան պաշտոնատար անձն իր լիազորություններն իրականացնելիս պետք է կատարի գործողություն կամ ընդունի որոշում, որը ողջամտորեն կարող է մեկնաբանվել որպես իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Վերը քննարկվեց, թե ովքեր են փոխկապակցված անձիք: Կարծում ենք, որ շահերի բախման նման սահմանումը շատ ընհանրական է և առավել հստակ ձևակերպման կարիք ունի: Բացի այդ, այն հակասում է նույն օրենքի 28-րդ հոդվածին, ըստ որի *հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները նորմերի*

⁵⁰ St´u Financial Supervision of Public Officials, էջ 10, կետ 3.6.3

⁵¹ St´u Financial Supervision of Public Officials, էջ 10, կետ 3.6.2

⁵² St´u <http://hetq.am/arm/news/16400/hovik-abrahamyanin-u-knojoy-karox-en-nakhandzel-nuynisk-lavaguyn-fermernery.html>

համակարգ է, որոնք միտված են ապահովելու հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի պատշաճ վարքագիծը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ:

Հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոններն են՝

7) *ձգտել կառավարել իր ներդրումներն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները:*

Փաստորեն 5-րդ հոդվածը շահերի բախումը փոխկապակցում է բարձրաստիճան պաշտոնատար անձանց հետ, իսկ 28-րդ հոդվածը նաև հանրային ծառայողների հետ, դիտարկելով այն որպես հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնների բաղադրիչ:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 30-րդ և 31-րդ հոդվածները սահմանում են, որ *բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից իր կամ իրեն փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվելը նշանակում է բարձրաստիճան պաշտոնատար անձի լիազորությունների շրջանակում այնպիսի գործողություն կատարելը կամ որոշում ընդունելը (այդ թվում՝ կոլեգիալ մարմնի կազմում որոշում ընդունելուն մասնակցելը), որը թեև ինքնին օրինական է, սակայն հանգեցնում կամ նպաստում է կամ ողջամտորեն կարող է հանգեցնել կամ նպաստել նաև՝*

1) *իր կամ իր հետ փոխկապակցված անձի գույքային կամ իրավական դրության բարելավմանը.*

2) *իր կամ իր հետ փոխկապակցված անձի անդամակցած ոչ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.*

3) *իր կամ իր հետ փոխկապակցված անձի մասնակցությամբ առևտրային կազմակերպության գույքային կամ իրավական դրության բարելավմանը.*

4) *իր հետ փոխկապակցված անձին պաշտոնում նշանակմանը:*

Նշված դրույթները չեն տարածվում պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների վրա: Նշված անձանց շահերի բախման նորմերը կարող են սահմանվել տվյալ ոլորտի առանձնահատկությունները կարգավորող օրենքներով:

Բարձրաստիճան պաշտոնատար անձը չի առաջնորդվում իր կամ իր հետ փոխկապակցված անձի անձնական շահերով, եթե տվյալ գործողությունը կամ որոշումն ունի համընդհանուր կիրառելիություն և անդրադառնում է անձանց լայն շրջանակի վրա այնպես, որ ողջամտորեն չի կարող մեկնաբանվել որպես բարձրաստիճան պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձի անձնական շահերով առաջնորդվել:

Շահերի բախում առաջանալու դեպքում բարձրաստիճան պաշտոնատար անձը, բացառությամբ պատգամավորների, սահմանադրական դատարանի անդամների, դատավորների և դատախազների, ինչպես նաև սույն օրենքի իմաստով վերադաս չունեցող բարձրաստիճան պաշտոնատար անձի, պարտավոր է իր վերադաս անձին գրավոր ներկայացնել շահերի բախման վերաբերյալ հայտարարություն՝ ներկայացնելով շահերի բախմանը վերաբերող կոնկրետ հանգամանքները: Մինչև վերադաս անձից գրավոր համաձայնություն ստանալը բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք չունի տվյալ հարցի վերաբերյալ գործողություն կատարելու կամ որոշում կայացնելու: Վերադաս անձն իրավունք ունի տվյալ հարցը քննարկելու և լուծելու իրավասությունը հանձնարարելու այլ պաշտոնատար անձի, եթե դա օրենքով արգելված չէ:

Բարձրաստիճան պաշտոնատար անձն իրավունք ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովից ստանալու պարզաբանում կոնկրետ իրավիճակում շահերի բախման վերաբերյալ հայտարարությամբ հանդես գալու անհրաժեշտության մասին: Եթե ներկայացված տվյալները եղել են ամբողջական, ապա բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի եզրակացությունը շահերի բախման բացակայության մասին հիմք է վարույթը կարճելու համար, եթե դա հարուցվի:

Փաստորեն, օրենքը շահերի բախման հայտարարագիր ներկայացնելու պարտականությունը սահմանում է միայն բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար:

Բացի այդ, ՀՀ օրենսդրությունը չի սահմանում շահերի բախման հայտարարագրերի օրինակելի ձև:

Պաշտոնատար անձանց գույքի և եկամուտների նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն է, որը ստեղծվել է 2012 թ. հունվարի 9-ին՝ «Հանրային ծառայության

մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Այդ հանձնաժողովի գործառույթներն ամրագրված են վերոնշյալ օրենքի 43-րդ հոդվածով⁵³:

Նախկինում գործում էր իրավակարգավորում, որը տրված էր Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 169 հոդվածում և ուներ հետևյալ բովանդակությունը. «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրի մեջ կեղծ տվյալներ մտցնելը կամ հայտարարագիրը սահմանված ժամկետում չներկայացնելը»: Եթե պաշտոնյան հայտարարագիրը չէր ներկայացվում նախագուշացումից 30 օր հետո, ապա տուգանվում էր:

Նախկին իրավակարգավորումը նաև սահմանված էր՝ 2006թ. «Ֆիզիկական անձանց գույքի և եկամուտների հայտարարագրման մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով, որի համաձայն՝ հայտարարագիրը չներկայացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ հայտարարագիրը չներկայացնելու հետևանքով չհայտարարագրված եկամտի 10 տոկոսի չափով:

Նույն օրենքի 21-րդ հոդվածի համաձայն սահմանվում էր.

1. Հայտարարատուի ներկայացրած հայտարարագրում եկամուտը թաքցնելը կամ այն պակաս ցույց տալն առաջացնում է տուգանքի նշանակում՝ թաքցված կամ պակաս ցույց տրված եկամտի 10 տոկոսի չափով: (...)
2. Հայտարարատուի ներկայացրած հայտարարագրում չստացված եկամուտ կամ ստացված եկամտից ավելի եկամուտ ներառելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ այդ եկամտի 10 տոկոսի չափով:

Այս օրենքներն ուժը կորցրած են ճանաչվել: Ներկայումս շրջանառվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» նախագիծ, որի 169.25 հոդվածի համաձայն սահմանված է.

«Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրերը բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելը՝ առաջացնում է նախագուշացում:

⁵³ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք, հոդված 43

Նախագգուշացումից հետո՝ 15 օրվա ընթացքում, հայտարարագիրը չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ երկուհարյուրապատիկի չափով:

Տուգանքի նշանակումից հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիրը չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ հինգհարյուրապատիկի չափով:

Հաշվետու տարվան հաջորդող 1 օրացուցային տարվա ընթացքում հայտարարագիրը չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրերը հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ (այդ թվում՝ վրիպակներ և տեխնիկական սխալներ թույլ տալը) բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով ներկայացնելը՝ առաջացնում է նախագգուշացում:

Նախագգուշացումից հետո 15 օրվա ընթացքում հայտարարագիրը հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխան չլրացնելը և կարգին համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Տուգանքի նշանակումից հետո 30 օրվա ընթացքում հայտարարագիրը հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջներին համապատասխան չլրացնելը և կարգին համապատասխան բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի՝ հինգհարյուրապատիկի չափով:

Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում սխալ կամ կեղծ տվյալներ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով:

Գույքի, եկամուտների և (կամ) փոխկապակցված անձանց մասին հայտարարագրեր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից գույքի, եկամուտների կամ փոխկապակցված անձանց մասին հայտարարագրում հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելը կամ ամբողջապես չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի ութհարյուրապատիկից մինչև հազարապատիկի չափով»:

244.16-րդ հոդվածի համաձայն Օրենսգրքի 169.25-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննելու և վարչական տույժերը նշանակելու իրավունք ունի բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրերը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագրերը օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու, կամ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ (այդ թվում՝ վրիպակներ և տեխնիկական սխալներ թույլ տալը) ներկայացնելու, կամ հայտարարագրում սխալ կամ կեղծ տվյալներ ներկայացնելու, կամ հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ ամբողջապես չներկայացնելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելը և վարչական տույժեր նշանակելը:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն կարգապահական սանկցիաներ գույքի և եկամուտների հայտարարագրի չներկայացնելու, ուշ լրացնելու, թերի լրացնելու համար: Մինչդեռ, օրինակ Արևելյան Եվրոպայի շատ երկրներում հայտարարագրեր չներկայացնելը հանգեցնում է պաշտոնից ազատման:

ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չեն նաև սանկցիաներ պաշտոնատար անձի հետ փոխկապակցված ընտանիքի անդամների համար՝ կապված գույքի և եկամուտների հայտարարագիր չներկայացնելու, թերի ներկայացնելու համար⁵⁴:

Նույնիսկ ընդունելի չէ այն մոտեցումը, որ այդպիսի սանկցիաներ նախատեսվեն բացառապես վարչաիրավական մակարդակով, քանի որ այդ դեպքում պաշտոնատար անձը տուգանքներ վճարելով այդպես էլ կարող է չներկայացնել գույքի և եկամուտների հայտարարագիր: Նպատակահարմար կլիներ, որ հենց ապօրինի հարստացման քրեականացման հոդվածում ներառվեր հայտարարագրեր չներկայացնելու համար քրեական պատասխանատվություն նախատեսող իրավանորմը:

⁵⁴ St' u Financial Supervision of Public Officials, էջ 14, պարագրաֆ 3.10

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ արդարադատության նախարարի հունվարի 22-ի թիվ 18-ա հրամանով «Ապօրինի հարստացման քրեականացման նպատակահարմարության վերաբերյալ վերլուծություն» իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբին 29.03.2016թ.-ին «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կողմից ներկայացվել է ծավալուն վերլուծություն, որի շրջանակներում ուսումնասիրվել է ԱՊՀ, Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի, Ասիայի, Օվկիանիայի և Աֆրիկայի ավելի քան երկու տասնյակ պետության որդեգրած քրեական քաղաքականությունը ապօրինի հարստացման հանցակազմի քրեականացման վերաբերյալ:

Գոյություն ունեն երեք հիմնական միջազգային փաստաթղթեր, այն է՝ 1996 թվականի Կոռուպցիայի դեմ Միջամերիկյան Կոնվենցիան, 2003 թվականի Կոռուպցիայի կանխարգելման և պայքարի Աֆրիկյան Միության Կոնվենցիան և 2003 թվականի ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ Կոնվենցիան, որոնք բոլորն էլ ապօրինի հարստացումը դիտարկում են որպես քրեական հանցագործություն⁵⁵:

Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է ՄԱԿ-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան 2007թ. մարտին: Կոնվենցիայի 20-րդ հոդվածով նախատեսվում է *«հաշվի առնելով իրենց սահմանադրությունը և իրավական համակարգի հիմնարար սկզբունքները՝ յուրաքանչյուր անդամ պետություն կարող է դիտարկել այնպիսի իրավական կամ այլ միջոցների ընդունումը, որոնք կարող են անհրաժեշտ լինել քրեականացնելու մեղավորությամբ կատարված ապօրինի հարստացումը, այն է՝ հանրային ծառայողի ունեցվածքի էական աճը, որը նա չի կարողանում ողջամտորեն հիմնավորել իր իրավաչափ եկամտի առնչությամբ»*:

⁵⁵ United Nations Convention against Corruption, supra note 2, art. 20; African Union Convention 69, art. 8; Inter-American Convention against Corruption, supra note 69, art. 9

Ներկայումս առնվազն 44 երկրներ ունեն ապօրինի հարստացումը անօրինական համարող օրենսդրություն և մի շարք նոր երկրներ ջանքեր են գործադրում այդ փորձը իրենց մոտ կիրառելու ուղղությամբ⁵⁶:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ

- ապօրինի հարստացման քրեականացումը արդեն իսկ նախատեսվել է նոր քրեական օրենսգրքի նախագծում 410-րդ հոդվածի ներքո,
- նույնիսկ եվրոպական պետություններից մի քանիսը, օրինակ՝ Լիտվան, Մակեդոնիան, Իտալիան, որտեղ կոռուպցիայի մակարդակը անհամեմատ ավելի ցածր է, քան ՀՀ-ում, ևս քրեականացրել են այն (Միացյալ Թագավորությունը 2016թ. ապրիլի 21-ին Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ Գործողությունների ծրագրում ևս ներկայացրել է ապօրինի հարստացման քրեականացումը), նաև ԱՊՀ երկրներից ևս քրեականացրել են Մոլդովան, Ուկրաինան,
- ինչպես նաև ոլորտում մասնագիտացած քաղաքացիական հասարակության կազմակերպությունների գերակշիռ մասը պաշտոնապես հայտարարել են վերոնշյալ ինստիտուտի քրեականացման անհրաժեշտության վերաբերյալ,

գտնում ենք, որ **ՀՀ-ում նպատակահարմար է քրեականացնել ապօրինի հարստացումը:**

Հանրային քննարկման նպատակով շրջանառության մեջ դրված նոր քրեական օրենսգրքի նախագծի 410-րդ հոդվածում նախատեսված է ապօրինի հարստացման հանցակազմը, որը ձևակերպված է հետևյալ կերպ.

«1. Ապօրինի հարստանալը՝ պաշտոնատար անձի եկամտի կամ գույքի չափի էական աճը կամ պաշտոնատար անձի կողմից էական ծախսերի կատարումը, որը չի հիմնավորվում նրա իրավաչափ եկամտով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

⁵⁶ MUZILA ET AL., supra note 4, at 89–90. The following civil and common R law jurisdictions have enacted illicit enrichment provisions: Algeria, Angola, Antigua and Barbuda, Argentina, Bangladesh, Bhutan, Bolivia, Botswana, Brunei, Chile, China, Colombia, Costa Rica, Cuba, Ecuador, Egypt (Arab Republic), El Salvador, Ethiopia, Gabon, Guyana, Honduras, Hong Kong SAR, India, Jamaica, Lebanon, Lesotho, Macao SAR, Macedonia, Madagascar, Malawi, Malaysia, Mexico, Nepal, Nicaragua, Niger, Pakistan, Panama, Paraguay, Peru, Philippines, Rwanda, Senegal, Sierra Leone, Uganda, Venezuela, and the West Bank and Gaza

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով»:

2. ՀԱՆՐԱՎՈՐ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՉԵԶՈՔԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1 ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾ

ՀՀ միջազգային փաստաթղթերի, արտասահմանյան փորձի, Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումներից ելնելով՝ առաջարկվել է ապօրինի հարստացման հանցակազմի հատկանիշների բացակայության ապացուցման բեռը դնել ենթադրյալ հանցանքը կատարած պաշտոնատար անձի վրա: Այդպիսի իրավակարգավորումը ՄԱԿ-ի կոռուպցիայի դեմ կոնվենցիայի ուղղակի պահանջն է, որը չի հակասում նաև հանրաճանաչ Եվրոպական դատարանի դիրքորոշումներին:

Այսպես, **Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Մալաթյակուն ընդդեմ Ֆրանսիայի (1988)** գործում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. *«Փաստի կամ օրենքի կանխավարկածները գործում են յուրաքանչյուր իրավական համակարգում և պետությունները պետք է սահմանափակեն կանխավարկածները ողջամիտ սահմաններում, որոնցում հաշվի է առնվում խնդրո առարկայի կարևորությունը և պահպանվում պաշտպանության իրավունքը»:*

Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի կողմից կայացված վճիռների ուսումնասիրությունից որպես փաստի կանխավարկածի վառ օրինակ նշենք հետևյալը. եթե անձը հատելով մաքսային սահմանն իր պայուսակում ունենում է թմրանյութ, ապա ինքն է կրում՝ ապացուցման բեռը՝ թմրամիջոցի իրենը չլինելու մասով: Նման իրավական գործիքներ են կիրառում նաև Ֆրանսիան, Շվեյցարիան և Իտալիան: Այդպիսին է Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի դիրքորոշումը, որը ենթակա է կիրառման նաև ապօրինի հարստացման հանցակազմի քրեադատավարական ռեժիմի պարագայում: Մասնավորապես, նույն օրինակով, պաշտոնատար անձը պետք է կրի իր հարստության ձեռք բերման օրինականությունն ապացուցելու պարտականությունը:

Արգենտինայում *Ալտոգարայ* դատական նախադեպում դատարանը գտել է, որ անմեղության կանխավարկածը չի խախտվում, քանի որ որևէ բան չի ենթադրվում, այլ՝ այն ինչ ապացուցվում է, դա սեփականության աճն է և, որ աճը հիմնավորված չէ:

Ուստի առաջարկվում է նաև նախատեսել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, որ իրավապահ մարմինները պարտավոր են սահմանել,

- a) Մեղադրանք ներկայացնելու օրը մեղադրյալի ենթակայության տակ գտնվող եկամտի և գույքի չափը,
- b) Մեղադրանք ներկայացնելու օրը մեղադրյալի հայտարարագրված կամ այլ կերպ հայտնի եկամտի և գույքի չափը,
- c) Էական անհամապատասխանությունը a)-ի և b)-ի միջև:

Միմիայն վերոնշյալից հետո է մեղադրյալը պարտավոր հիմնավորել, որ էական անհամապատասխանությունը օրինական եղանակներով է ձեռք բերվել: Վերոնշյալ դիրքորոշումը տրված է նաև Հոնկ-Կոնգի դատական նախադեպային իրավունքում՝ *Գլխավոր դատախազն ընդդեմ Հուի Կին-Հոնգի (Attorney General v Hui Kin-hong)* դատական գործում: Մեղադրյալը պետք է ոչ թե գործարքների «բնույթը» ներկայացնի, այլ միմիայն գործարքների գոյության ապացույցներ ներկայացնի: Մեղադրյալը տիրապետում է տվյալ տեղեկատվությանը: Ապացուցման պարտականությունը շարունակում է մնալ դատախազության վրա, ով դեռ պետք է *ողջամիտ կասկածից վեր* ապացուցման ստանդարտով ապացուցի, որ տվյալ ապացույցը չի բացատրում հարստության օրինական ծագումը:

Դատավարության ավարտից հետո մեղադրյալը կարող է դատապարտվել միմիայն, եթե

- դատախազությունը ապացուցել է անհամապատասխանությունը *ողջամիտ կասկածից վեր* ապացուցման չափանիշի համաձայն և
- ցանկացած բացատրություն, որը մեղադրյալը ներկայացրել է անհամապատասխանության վերաբերյալ, դատավորի համոզմամբ, բավարար չէ հարստացումը օրինական համարելու համար:

Արգենտինայի դատական նախադեպերի համաձայն՝ իրավապահ մարմինները պարտավոր են ապացույցներ ձեռք բերել անկախ աղբյուրներից, ինչպիսիք են ՁԼՄ-ներում հաղորդագրություններ ներկայացրած լրագրողների ցուցմունքները, նախկին պաշտոնյաների գույքի և եկամտի հայտարարագրերը, պահանջված տեղեկատվությունը հարկային մարմիններից, անշարժ գույքի գրանցման պետական ռեգիստրից, հանրային

տրանսպորտի ռեգիստրից, ազգային միգրացիոն ծառայությունից, որը գրանցում է երկրից ելքերն ու մուտքերը և այլ բանկային և վարկային հաստատություններին:

2.2 ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՄԱՆ ՀԱՐՑ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխություններով (2015թ. դեկտեմբերի 6-ի) անմեղության կանխավարկածը նախատեսող սահմանադրական դրույթը կրել է լուրջ սահմանափակումներ: Մասնավորապես, նախկին սահմանադրական դրույթը (2015թ. փոփոխություններով) նախատեսում էր, որ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի (Հոդված 21):

2015թ. կատարված փոփոխություններ արդյունքում Սահմանադրության 66-րդ հոդվածն ամրագրում է անմեղության կանխավարկածի սկզբունքը՝ նշելով **միայն, որ «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:** Անմեղության կանխավարկածի սկզբունքի մյուս էական տարրերը դուրս են մնացել սահմանադրական դրույթի բովանդակությունից, ուստի խնդիր չկա:

2.3. ԼՈՌՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԱՆՁԻ ԴԵՄ ՑՈՒՑՄՈՒՆՔ ՉՏԱԼՈՒ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ապօրինի հարստացման իրավախախտման քրեականացումը նաև չի խաթարում արդար դատաքննության անքակտելի բաղադրիչներ՝ **լռության իրավունքի և սեփական անձի դեմ ցուցմունք չտալու սկզբունքները**, որոնք սահմանված են ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 2-րդ մասով, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի 14-րդ հոդվածի 2-րդ մասով:

ՄԻԵԴ-ը *Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության* գործում (*Murray v United Kingdom*) գործում գտել է, որ **լռելու իրավունքը բացարձակ չէ:** ՄԻԵԴ-ը սահմանել է այն պայմանները, որոնց առկայության դեպքում մեղադրյալի լռությունից ոչ ի հօգուտ

մեղարդյալի հետևությունն անելը օրինական է: Մասնավորապես, հետևությունները կարող են արվել միայն այն դեպքում, երբ մեղադրող կողմը կառուցել է *prima facie* (առերևույթ) մեղադրանք: Այսինքն՝ *առկա է ուղղակի ապացույց, որին հավատալու և օրինական հետևությունները համակցելու դեպքում ողջամիտ երդվյալ ատենակալը հաստատված կհամարի, որ իրավախախտման էական տարրերը ապացուցված են ողջամիտ կասկածից վեր ապացուցման չափանիշով: Ցանկացած կոնկրետ գործով հարցը կայանում է նրանում, արդյոք դատախազության կողմից մեղադրանքը բավականաչափ ուժեղ է, որպեսզի պատասխան պահանջի: Ազգային դատարանները չեն կարող վճռել, որ անձը մեղավոր է միայն այն պատճառով, որ որոշում է լուռ մնալ: Միայն այն դեպքում, երբ մեղադրյալի դեմ ապացույցը «պահանջում է» բացատրություն, որը մեղադրյալը ի վիճակի է տրամադրել, նման բացատրություն չտրամադրելը կարող է թույլատրել ողջախոհ հետևություններ անել, որ բացատրություն չկա և մեղադրյալը մեղավոր է:*

Եվրոպայի արդարադատության դատարանը ևս *Հանձնաժողովն ընդդեմ ԷսՋիԷլ Բարբոնի (Commission v. SGL Carbon)* գործում սահմանել է, որ լռության պահպանելու իրավունքը չի տարածվում, օրինակ, փաստաթղթերի տրամադրման պահանջը մերժելիս, նույնիսկ այն դեպքում, երբ դրանց ուսումնասիրության արդյունքում կարող է հիմնավորել խախտման առկայությունը:

Բացի այդ, որոշ երկրների օրենսդրությամբ վարույթն իրականացնող մարմին հարցերին չպատասխանելու իրավունքը բացարձակ չէ: Այսպես, Անգլիայում և Ուելսում հարցերին չպատասխանելու իրավունքը սահմանափակվում է հետևյալ կերպ, որ եթե կասկածյալը հարցաքննության ընթացքում չի պատասխանում հարցերին, բայց հետագայում հենվում է այն փաստերի վրա, որոնք չի նշել հարցաքննության ընթացքում ի պաշտպանություն իրեն, դատարանը կարող է երդվյալներին առաջարկել այդ լռությունից հետևություն անել ոչ ի հոգուտ կասկածյալի: Վերջինս պետք է իրազեկված լինի հարցերին չպատասխանելու իր իրավունքի մասին, բայց միաժամանակ նրան նաև պետք է տեղեկացնել այդ իրավունքն օգտագործելու հնարավոր հետևանքների մասին : Իհարկե, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսդրության իրավական կարգավորման պայմաններում, բացակայում է դատարանի կողմից նման գնահատական տալը, քանի որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 336 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ամբաստանյալին պարզաբանվում է, որ նա իրավունք ունի ցուցմունքներ չտալ և դա չի կարող մեկնաբանվել ի վնաս նրան:

Ուստի անհրաժեշտ է նաև նախատեսել, որ վերոնշյալ հոդվածում ևս պետք է փոփոխություններ կատարվեն և նշվեն, որ օրենքով նախատեսված վերոնշյալ դեպքերում ցուցմունքներ չտալը և լռելու իրավունքից օգտվելը կարող է մեկնաբանվել ի վնաս մեղադրյալի, այնքանով, որ ուղղակի ապացույցի վրա հիմնված ուժեղ/աներկբա մեղադրանքի դեպքում մեղադրյալի կողմից բացատրություններ չտալը կարող է ի վնաս իրեն հետևությունների տեղիք տալ:

2.4 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄՆԵՐ

Քաղաքական հետապնդումների ռիսկը չեզոքացնելու համար ներկայացնում ենք հետևյալ առաջարկությունները.

1. Առաջարկվել է կարգավորել հոդվածի գործողությունը հետևյալ կերպ.
 - a. Սահմանել, որ ապօրինի հարստացումը քրեականացնող հոդվածը ուժի մեջ կմտնի օրինակ 2017թ. մարտի 1-ից, և բնականաբար, ելնելով ՀՀ քրեական հիմնաքարային սկզբունքներից՝ այն չի կարող ունենալ հետադարձ ուժ,
 - b. Սահմանել, որ հիմք են հանդիսանալու 2017թ. մինչև փետրվարի 15-ը ներկայացված 2016թ-ի գույքի և եկամուտների հայտարարագրերը, և ապօրինի հարստացման գործողությունը կտարածվի միմիայն դրանից հետո իրականացված ապօրինի հարստացման դեպքերի վրա: Այսինքն, իրավապահ մարմինները կբացահայտեն վերոնշյալ իրավախախտումները 2017թ.-ին ներկայացված հայտարարագրերը և արդեն հաջորդիվ ներկայացրած հայտարարագրերը համեմատելու և էական անհամապատասխանություններ գտնելու և այլ եղանակներով:

Այսինքն, քաղաքական հաշվեհարդարների հնարավորությունը մինչ օրենքի ընդունումը կատարվածի համար կբացառվի, քանի որ նախկինում կատարված ապօրինի կերպով հարստացումների դեպքում պատասխանատվություն չի նախատեսվի:

2. Ի տարբերություն ՀՀ Քրեական նոր օրենսգրքի նախագծում գետեղված դրույթի, ապօրինի հարստացման հանցակազմում **ապացուցման հիմնական բեռը իրավապահ մարմինների վրա թողնելու վերաբերյալ վերոնշյալ կարգավորումները ևս չեզոքացնում են կուլակաթափության ռիսկերը**, քանի որ իրավապահ մարմինն է պարտավոր ապացուցել պաշտոնատար անձի մեղավորությունը, իսկ

պաշտոնատար անձը եթե ցույց տա, որ օրենքի ընդունումից հետո ապօրինի կերպով չի հարստացել, ապա վերջինս չի կարող ենթարկվել պատասխանատվության:

Այսինքն, կբացառվեն ռիսկերը նաև օրենքի ընդունումից հետո պաշտոնում գտնվելու դեպքում:

3. Թեև միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ թվով յոթ պետություն (ներառյալ՝ Հոնգ Կոնգ, Արգենտինա, Պանամա), հանրային շահից ելնելով, նախատեսում են պատասխանատվություն նաև այն դեպքերում, երբ պաշտոնատար անձինք ապօրինի կերպով հարստացել են պաշտոնը դադարեցնելուց հետո 2-ից մինչև ընդհուպ 5 տարվա ընթացքում, այնուամենայնիվ, որպեսզի էլ ավելի բացառվեն քաղաքական հետապնդումների ռիսկերը նաև պաշտոնը դադարեցնելուց հետո այն պարագայում, երբ նախկին պաշտոնատար անձինք դառնում են ընդդիմության ներկայացուցիչներ, քննարկումներից հետո, մասնավոր և հանրային շահերը հավասարակշռելով, որպես ոսկե միջին առաջարկվել է ապօրինի հարստացման համար քրեական պատասխանատվություն սահմանել այնպես, որ այն գործողության մեջ լինի **պաշտոնը դադարեցնելու պահից հետո միայն 2 տարվա ընթացքում**: Հնարավոր կարգավորումը նման տեսք կունենա.
- Ապօրինի հարստանալը՝ պաշտոնատար անձի եկամտի կամ գույքի չափի էական աճը կամ պաշտոնատար անձի կողմից էական ծախսերի կատարումը պաշտոնավարման ընթացքում կամ պաշտոնը դադարելուց հետո 2 տարվա ընթացքում, որը նա չի հիմնավորում իր իրավաչափ եկամտով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:*

Այսինքն, վերոնշյալը չեզոքացնում է ռիսկերը նաև այն պաշտոնատար անձանց համար, ովքեր պաշտոնը դադարեցնելուց հետո համալրում են ընդդիմության շարքերը:

4. Չիլիում ապօրինի հարստացման հանցակազմում որպես պաշտոնատար անձանց պաշտպանության հավելյալ միջոց ներառված է նաև դրույթ, որի համաձայն, եթե պաշտոնյան անմեղ է ճանաչվում, այն անձը, ում դիմումի հիման վրա քրեական հետապնդում էր իրականացվում, պետք է տուգանվի զգալի չափով: Քննարկվել է նաև համանման դրույթի ամրագրումը մեր օրենսդրությամբ, սակայն հանգել ենք այն եզրակացության, որ մեր երկրում այն կարող է տեղեկատվություն հանձնող

անձանց համար կարող է ստեղծել վախի մթնոլորտ՝ ստիպելով հրաժարվել տեղեկատվություն տրամադրելուց հանուն հանրային շահի:

2.5 ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Արդյունավետության գնահատականը կարելի է տալ 3 չափանիշի համաձայն՝

1. Միջազգային մարմինների գնահատական,
2. Այն երկրներում, որոնք քրեականացրել են տվյալ իրավախախտումը, կոռուպցիայի նվազման մակարդակ,
3. Այն երկրներում, որոնք քրեականացրել են այլ կոռուպցիոն իրավախախտումներ, սակայն չեն քրեականացրել ապօրինի հարստացումը, կոռուպցիայի բարձր մակարդակ:
4. Նույնիսկ այն երկրներում, որոնք ի սկզբանե չէին քրեականացրել, հաշվի առնելով ապօրինի հարստացման քրեականացման արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում, այդուամենայնիվ որոշել են քրեականացնել:

1. Միջազգային մարմինների գնահատական

- ՏՀԶԿ-ն նման իրավախախտման գոյությունը համարում է կոռուպցիայի դեմ պայքարի լավագույն եղանակներից մեկը,
- Միավորված ազգերի կազմակերպության Թմրանյութերի և հանցավորության դեմ պայքարի գրասենյակը (UNODC) իրավախախտումը նշել է որպես հանրային պաշտոնյաների շրջանում կոռուպցիայի զսպման օգտակար մեխանիզմ:
- UNODC-ի և Համաշխարհային բանկի համատեղ Գողացված ակտիվների վերականգնման նախաձեռնությունը (StAR) նշում է, որ որոշ երկրներ կարողացել են վերականգնել մեծ գումարներ ապօրինի հարստացման հանցագործության շնորհիվ:

2. Այն երկրներում, որոնք քրեականացրել են տվյալ իրավախախտումը, կոռուպցիայի նվազման մակարդակ:

1. Որոշ երկրներում ապօրինի հարստացման քրեականացումը համարվում է կոռուպցիայի դեմ պայքարի հիմնական գործիք, օր.՝ Բանգլադեշ, Հնդկաստան, Պակիստան:

շտոնատարում ապօրինի հարստացման 280 դեպք է ներկայացվել դատարան, որոնցից 127-ը ավարտվել են մեղադրանքով (62.25%):

Հոնկ-Կոնգում, որտեղ իրավախախտումը գոյություն ունի շուրջ 40 տարի է, *Գլխավոր դատախազն ընդդեմ Հուի Կին-Հոնգի* գործում վերաքննիչ դատարանը գտել է, որ այն «ապացուցել է իր արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում»: Հոնկ-Կոնգում դատարան ներկայացված ապօրինի հարստացման դեպքերից 64.25%-ը ավարտվել են մեղադրանքով:

- «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» միջազգային հակակոռուպցիոն կազմակերպության վարկանիշային միջին գնահատականը նախքան օրենսդրության ընդունումը և օրենսդրությունից հետո փոխվել է՝ Լիտվա, Չիլի, Չինաստան՝ համապատասխանաբար 4.75 -5.3, 6.9 – 7.22, 2.3 – 3.5 և այլն:

3. Այն երկրներում, որոնք քրեականացրել են այլ կոռուպցիոն իրավախախտումներ, սակայն չեն քրեականացրել ապօրինի հարստացումը, կոռուպցիայի բարձր մակարդակ:

- ՀՀ-ն և ՌԴ-ն վավերացրել են ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ կոնվենցիան», քրեականացրել և պատժում են կաշառք տալը և վերցնելը, գույքի կամ դրամական միջոցների յուրացնելը, այնուամենայնիվ, երկու երկրում էլ կոռուպցիայի մակարդակը շարունակում է մնալ բարձր: Transparency International Russia-ի փորձագետները գտնում են, որ կոռուպցիայի նման բարձր մակարդակի պատճառներից է Ռուսաստանի ձախողումը՝ վավերացնել վերոնշյալ կոնվենցիայի 20-րդ հոդվածը:

4. Նույնիսկ երկրներ, որոնք ի սկզբանե չէին քրեականացրել, հաշվի առնելով ապօրինի հարստացման քրեականացման արդյունավետությունը կոռուպցիայի դեմ պայքարում, այդուամենայնիվ որոշել են քրեականացնել:

Օրինակ՝ Միացյալ Թագավորությունը ևս 2016թ. ապրիլի 21-ին Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ Գործողությունների ծրագրում ներկայացրել է ապօրինի հարստացման քրեականացումը:

2.6 ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՀՀ Սահմանադրության փոփոխությունների 60-րդ հոդվածով սահմանված է, որ *յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:*

Ինչպես տեսնում ենք վերոնշյալ սահմանադրաիրավական նորմի վերլուծությունից, սահմանադրությունը երաշխավորում է միմիայն **օրինական հիմքով ձեռք բերված սեփականության իրավունքը**, և նախատեսում է սեփականության իրավունքից զրկում օրենքով նախատեսված դեպքերում:

Պորտուգալիայի սահմանադրական դատարանը ևս անդրադարձել է վերոնշյալ հարցին և շեշտել, որ սեփականության իրավունքի պաշտպանությունը պետք է հաշվի առնվի:

Որոշ երկրներ, օրինակ՝ Իտալիան, կարող են տարածել բռնագրավումը պաշտոնատար անձի ոչ միայն ապօրինի կերպով ձեռք բերված, այլև՝ ընդհանրապես ողջ գույքի վրա:

Ի հակադրումն վերոնշյալի և հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր առաջարկություններում խոսքը գնում է ոչ թե ընդհանրապես գույքի բռնագրավման, այլ՝ ապօրինի կերպով ձեռք բերված գույքի վերաբերյալ, սեփականության իրավունքի ոտնահարման որևէ խնդիրներ առաջ չեն գալիս:

3. ԱՅԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Առաջարկվել է հողվածի գործողությունը տարածել նաև պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձանց վրա (ծնողներ, կին/ամուսին (այդ թվում նաև նախկին կամ փաստացի), հարազատ քույրեր և եղբայրներ, երեխաներ, կնոջ/ամուսնու ծնողներ, հարազատ քույրեր և եղբայրներ) կամ նախատեսել առանձին հանցակազմ ապօրինի հարստացմանը **փոխկապակցված անձանց** մասնակցության համար, ինչպես օրինակ Լիբանանում է:

Այդպիսի իրավակարգավորման անհրաժեշտությունն ուղղակիորեն բխում է օրենսդրի կամահայտնությունից: Եթե օրենսդիրն ի սկզբանե նախատեսել է, որ պաշտոնատար անձ հանդիսացող անձը պետք է ներկայացնի իր և իր հետ փոխկապակցված անձանց գույքի և եկամուտների հայտարարագիր, ապա քրեաիրավական վերահսկողությունը ոչ միայն պետք է տարածվի պաշտոնատար անձի, այլ նաև վերջինիս հետ փոխկապակցված անձանց նկատմամբ: Այս շրջանում, մինչև հայտարարագրման համակարգում համապատասխան փոփոխություններ կատարելը և հայտարարագրման պարտականություն ունեցող անձանց շրջանակը ընդլայնելը, պետք է պատասխանատվություն սահմանվի պաշտոնատար անձի ամուսնու, համատեղ ապրող ծնողի և չամուսնացած չափահաս զավակի համար: Հակառակ պարագայում, կխախտվի քրեական իրավունքի հիմնաքարային՝ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, քանի որ պաշտոնատար անձն իր եկամուտներն ու գույքը կարող է ձևակերպել իր հետ փոխկապակցված որևէ անձի անունով, մինչդեռ ինքն ազատվել քրեական պատասխանատվությունից:

2) Արտասահմանյան գրեթե բոլոր երկրների միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքում (Ուկրաինա, Մոլդովա, Մակեդոնիա, Ռումինիա, Սլովակիա, Ինդոնեզիա, Նոր Զելանդիա) առաջարկվել է ապօրինի հարստացման հանցակազմի սանկցիայում պարտադիր ներառել **«ապօրինի կերպով ձեռք բերված գույքի բռնագրավում» պատժատեսակը**, որի նպատակն է ապահովել ապօրինի կերպով ձեռք բերված գույքային միջոցների վերադարձը պետությանը: Արգենտինայում նախատեսված է ապօրինի հարստացման արժեքի 50-ից մինչև 100 տոկոսի չափով տուգանք:

Բացի այդ, միջազգային փորձի ուսումնասիրությունը, օրինակ՝ Ուկրաինայի, Մոլդովայի, Արգենտինայի, Պերուի, ցույց է տալիս, որ որպես պատժատեսակ կիրառվում է նաև **զբաղեցրած պաշտոնից ազատումը և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկումը 10-ից 15 տարի ժամկետով**:

Սակայն քանի որ մեր օրենսդրությամբ վերոնշյալ պատժատեսակը որպես լրացուցիչ պատժատեսակ նախատեսում է առավելագույնը 3 տարվա ժամկետ, ուստի հնարավոր կարգավորումը նման տեսք կունենա.

Ապօրինի հարստանայր՝ պաշտոնատար անձի եկամտի կամ գույքի չափի էական աճը կամ պաշտոնատար անձի կողմից էական ծախսերի կատարումը, որը նա չի հիմնավորում իր իրավաչափ եկամտով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով, զբաղեցրած պաշտոնից ազատմամբ և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ 3 տարի ժամկետով և ապօրինի կերպով ձեռք բերված գույքի բռնագրավմամբ:

Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով, զբաղեցրած պաշտոնից ազատմամբ և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ 3 տարի ժամկետով և ապօրինի կերպով ձեռք բերված գույքի բռնագրավմամբ:»:

3) Առաջարկվել է ապօրինի հարստացման հանցակազմի ներքո ամրագրել նաև պաշտոնատար անձի կամ նրա հետ փոխկապակցված անձանց պարտքերի մարումը երրորդ անձանց կողմից, ինչպիսի կարգավորում գործում է նաև Պարագվայում, որը վերաբերում է նաև պաշտոնատար անձի ամուսնուն և արյունակցական առաջին և երկրորդ աստիճանի կապի մեջ մտնող անձանց պարտքերի մարմանը երրորդ անձանց կողմից: Հնարավոր կարգավորումը նման տեսք կունենա. *Ապօրինի հարստանայր՝ պաշտոնատար անձի եկամտի կամ գույքի չափի էական աճը կամ պաշտոնատար անձի կողմից էական ծախսերի կատարումը, ինչպես նաև պաշտոնատար անձի պարտքերի մարումը երրորդ անձանց կողմից պաշտոնավարման ընթացքում, որը նա չի հիմնավորում իր իրավաչափ եկամտով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:*

4) Ապօրինի հարստացման հանցակազմում **էական աճը** որոշելու համար կարելի է սահմանել՝

- հղում կատարելով նվազագույն աշխատավարձին (կամ նվազագույն կենսաապահովման զամբյուղին), ինչպես օրինակ սահմանված է Լիտվայի քրեական օրենսգրքի 189-1 հոդվածում: Սահմանված շեմից ցածր անհամապատասխանության դեպքում պաշտոնատար անձը ենթարկվում է

վարչական պատասխանատվության, որն արտահայտվում է գույքի կամ եկամուտների 10-ից 50% չափով տուգանքի:

- տոկոսային շեմ հայտարարագրված գույքի և եկամուտների և իրականում տիրապետող գույքի և եկամուտների միջև անհամապատասխանության: Օրինակ Հնդկաստանում *Քրիշնանանդ Աղնահաթրին ընդդեմ Էմ Փէ պետության, Մահարաշթրա պետություն ընդդեմ Փոլոնջի Դարաբ-շաու Դարուվալլայի, Մարանն ընդդեմ Էմ Փէ պետության (Krishnanand Agnahatri v State of M.P, State of Maharashtra v. Pollonji Darab- shaw Daruwalla, Saran v Sate of M. P.)* դատական գործերում սահմանվել է 10% շեմ:
- Պակիստանում մոտեցումը հետևյալն է. Այն գործերը, որոնք իրենց մեջ փոքր չափսի անհամապատասխանություն են ներառում, հղվում են համապատասխան բաժնին: Բաժինը ինքն է որոշում ինքնուրույն ներքին կարգով լուծել պաշտոնատար անձի հետ կապված խնդիրը, թե դիմել իրավապահ մարմինների օգնությանը:

Շեմի սահմանումը անհրաժեշտ է այն տեսանկյունից, որ *դե մինիմիս նոն կուրասս պրատոր (de minimis non curat praetor)* սկզբունքի համաձայն (օրենքը մանրուքներով չի զբաղվում), չափազանց փոքր անհամապատասխանությունները չպետք է հետապնդվեն:

Առաջարկվում է քննարկել և նախատեսել, թե նվազագույն աշխատավարձը քանի անգամ գերազանցող գումարը կհամարվի շեմ:

5) Հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավախախտման սուբյեկտ են հանդիսանում ոչ միայն բարձրաստիճան պաշտոնատար անձինք, այլև՝ հանրային ծառայողները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված դրույթները առ այն, որ հայտարարագրման սուբյեկտներ հանդիսանում են միմիայն բարձրաստիճան պաշտոնատար անձինք, որպեսզի իրավապահ մարմինները կարողանան պատշաճ կերպով իրականացնել իրենց առջև ծառայած խնդիրները, անհրաժեշտ է համապատասխան **փոփոխություններ կատարել «Հանրային ծառայության մասին» օրենքում և սահմանել հայտարարագրման ենթակա սուբյեկտներից նոր շրջանակ՝ ներառելով նաև բոլոր հանրային ծառայողներին:**

Հայտարարագրման համակարգում բացերը փակելու նպատակով իրականացնել նաև հետևյալ բարեփոխումները՝

- **հայտարարագրման ենթակա սուբյեկտների շրջանակում ընդգրկել բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյ արյունակցական կապի առաջին աստիճանի մեջ**

գտնվող այն անձանց, որոնք ազատված են հայտարարագրման պարտականությունից, օրինակ՝ ամուսնացած, սակայն համատեղ ապրող զավակները, անչափահաս զավակները,

- հայտարարագրման ենթակա սուբյեկտների շրջանակում ընդգրկել նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ արյունակցական կապի 2-րդ աստիճանի մեջ գտնվող ընտանիքի մյուս անդամներին,
- հայտարարագրման առարկայի մեջ ընդգրկել նաև ոչ ակտիվ հանդիսացող ծախսերը, ինչպիսիք են թանկարժեք ճամփորդություններն ու արձակուրդները, իրենց կամ իրենց ընտանիքի անդամների ուսման վարձերը արտերկրի թանկարժեք ուսումնական հաստատություններում և այլն,
- սահմանել նաև շահերի բախման հայտարարագրերի ներկայացումը,
- հիմնել հայտարարագրերի ստուգման և աուդիտի անցկացման համակարգ,
- բնութագրիչ տվյալները տարածել ամբողջ հայտարարագրվող տեղեկատվության վրա, ինչպիսիք օրինակ ընկերությունների անվանումներն են և այլն,
- հիմնել նաև կարգապահական սանկցիաների համակարգ հայտարարագրերը ուշ ներկայացնելու, չներկայացնելու, թերի ներկայացնելու կամ ոչ ճշգրիտ ներկայացնելու համար, ինչպիսիք են օրինակ պաշտոնից հեռացումը, որոշակի ժամկետով, օրինակ՝ մեկ տարի, պաշտոնական առաջխաղացում ունենալու արգելքը, ինչպես օրինակ Լիտվայում է, աշխատավարձի կամ դրա որոշակի մասի չվճարելը, ինչպիսին օրինակ համապատասխանաբար Խորվաթիայում և Գերմանիայում է և այլն, աշխատավարձից նվազում, ինչպես օրինակ Կոստովոյում է,
- սահմանել, որ հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմինը, ստուգումն իրականացնելուց հետո անհրաժեշտության դեպքում իրավունք ունի պահանջել նաև այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձանցից հայտարարագրեր, ովքեր կապված են հայտարարագրեր ներկայացնող սուբյեկտներից հետ, ինչպես օրինակ Ալբանիայում կամ Էստոնիայում է:

6) Անհրաժեշտ է նաև միջոցներ ձեռնարկել և սահմանափակել կանխիկ դրամի շրջանառությունը հանրային ծառայողների համար, վերջինիս կողմից պարտադիր դարձնել փոխառության, նվիրատվության և այլ պայմանագրերի կատարման համար իրականացվելիք վճարումներն իրականացնել միայն անկանխիկ՝ բանկային փոխանցումների եղանակով: Անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ

կատարել «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի» մասին օրենքում և մեխանիզմներ սահմանել, որ 1 միլիոն ՀՀ դրամը գերազանցող վերոնշյալ գործարքները, որոնք ուսումնասիրվում են Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կողմից, զեկուցվեն համապատասխան հակակոռուպցիոն մարմնին:

7) Առաջարկվել է ստեղծել հակակոռուպցիոն անկախ ունիվերսալ մարմին, որը մասնագիտացված կլինի կոռուպցիոն բնույթի հանցագործությունների բացահայտմամբ և կիրականացնի ինչպես հետաքննություն, այնպես էլ նախաքննություն: Առաջարկվել է այդ մարմնի միջոցով ապահովել անձանց կոռուպցիոն բնույթի մտահոգությունների ուսումնասիրությունը, հասարակության վստահության բարձրացումը, կոռուպցիայի կանխարգելումը:

8) Միննույն ժամանակ, հաղորդում տվող անձանց համապատասխան պաշտպանության միջոցներ կիրառելու նպատակով առաջարկվել է առանձին իրավական ակտի՝ օրենքի մակարդակով սահմանել այդ անձանց պաշտպանության կառուցակարգերը, երաշխիքները, ինչպես նաև նրանց հաղորդման քննարկման արդյունքում քրեական գործի հարուցման առանձնահատկությունները:

9) Միննույն ժամանակ, ապօրինի հարստացման հանցակազմի քննության արդյունավետության ապահովման նպատակով՝ առաջարկվել է այդ մարմնին օժտել **համապատասխան տեղեկատվական բազաներից օգտվելու հնարավորությամբ՝** գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով: Հարկ է նշել, որ ներկայումս խնդրահարույց են բանկային գաղտնիքի հետ կապված կարգավորումները, որոնք թույլ չեն տալիս հայտարարագրերի վերլուծությամբ զբաղվող մարմնին լիակատար իրացնել իրենց վերապահված լիազորությունները: Որոշ երկրներում, ինչպես օրինակ Կոսովոն կամ Սերբիան, վերոնշյալ մարմիններ իրավունքի ունեն պահանջել բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկատվությունը: Որոշ երկրներում, ինչպես օրինակ Ալբանիան կամ Մակեդոնիան, պաշտոնատար անձինք համաձայնվում են, որ որոշակի շեմը անցնելու և իրենց համաձայնության առկայության դեպքում, վերահսկող մարմինը բանկից մանրամասն տեղեկատվություն ստանա:

Առաջարկվում է նաև **հիմնել ռեեստր, որում կհրապարակվի ՀՀ բոլոր բանկերում հաշիվներ ունենալու հանգամանքի մասին տեղեկատվություն՝ առանց նշելու գումարը:** Այս եղանակով, մարմինը հեշտությամբ կպարզի, եթե պաշտոնատար անձը չի հայտարարագրել,

սակայն ունի հաշիվ: Նման կարգավորումը կրկին կհանդիսանա հավասարակշռող մեխանիզմ հանրային և մասնավոր շահերի միջև:

Առաջարկվել է գործող քրեական օրենսգրքի «Պետական ծառայությունների դեմ ուղղված հանցագործություններ» վերտառությամբ 29-րդ գլխում ամրագրել ապօրինի հարստացման հանցակազմը հետևյալ ձևակերպմամբ.

«1. Ապօրինի հարստանալը՝ պաշտոնատար անձի եկամտի կամ գույքի չափի էական աճը կամ պաշտոնատար անձի կողմից էական ծախսերի կատարումը, ինչպես նաև պաշտոնատար անձի պարտքերի մարումը երրորդ անձանց կողմից պաշտոնավարման ընթացքում կամ պաշտոնից հեռանալուց հետո 2 տարվա ընթացքում, որը նա չի հիմնավորում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համապատասխան հոդվածով սահմանված կարգով իր իրավաչափ եկամտով՝ պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով, զբաղեցրած պաշտոնից ազատմամբ և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ 3 տարի ժամկետով և ապօրինի կերպով ձեռք բերված գույքի բռնագրավմամբ:

2. Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված հանցանքը, որը կատարվել է բարձրաստիճան պաշտոնատար անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասներկու տարի ժամկետով, զբաղեցրած պաշտոնից ազատմամբ և որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի զրկմամբ 3 տարի ժամկետով և ապօրինի կերպով ձեռք բերված գույքի բռնագրավմամբ:»

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ Սահմանադրություն առ 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխությունները և լրացումները,
2. ՀՀ քրեական օրենսգիրք առ 2016թ. փոփոխությունները և լրացումները,
3. ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագիծ 2015թ.,
4. ՀՀ նոր քրեական օրենսգրքի հայեցակարգ 2014թ.,
5. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիր, կառավարության 2015 թվականի N 1141 որոշում,
6. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք
7. ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թվականների միջոցառումների ծրագիր, կառավարության 2015 թվականի N 1141 որոշում
8. «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենք (ընդունված է 2011 թվականի մայիսի 26-ին)
9. «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2008 թվականի մայիսի 26-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի օգոստոսի 31-ին,
10. «Ֆիզիկական անձի գույքի և եկամուտների հայտարարագրի ձևը և լրացման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 1038-Ն
11. «Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի, հարկային տարվա՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող գույքի և եկամուտների հայտարարագրի ու բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1819-Ն որոշում, ՀՀ կառավարություն, 2011 թվականի դեկտեմբերի 15
12. Tilman Hoppe, Valts Kalniņš, Country risk assessment – Armenia Financial Supervision of Public Officials (“Income and Asset Declarations”), March 2013, ECCU-EaP-1/2013

13. Comparative Evaluation of Unexplained Wealth Orders, Booz Allen Hamilton, January 2012
14. On the Take Criminalizing Illicit Enrichment to Fight Corruption, Lindy Muzila, Michelle Morales, Marianne Mathias Tammar Berger p. 36
15. Argentine Criminal Code of 1964, Article 268.2
16. Law no. 8429 of 2 June 1992, Article 9, Section VII of the Law of Administrative Improbity
17. Conference of the States Parties to the United Nations Convention against Corruption, CAC/COSP/IRG/I/1/1/Add.18, էջ 3.
18. 1991, Law 28355 of 2004, Enriquecimiento Illicito
19. Chile, 1999, Penal Code, Article 241.
20. Penal Code of Panama of 2008, Article 345,
21. 1994, Corruption and Economic Crime Act, Article 34,
22. <http://www.transparency.org/cpi2015>
23. Salabiaku v. France (1988), Application no. 10519/83, Section 28.
24. <http://hetq.am/arm/news/16400/hovik-abrahamyanin-u-knojy-karox-en-nakhandzel-nuynisk-lavaguyn-fermernery.html>
25. 1979 թվականին ընդունված Չինաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը
26. О контроле конституционности некоторых положений Уголовного кодекса и Уголовно-процессуального кодекса (расширенная конфискация и незаконное обогащение) (Обращение No 60a/2014)
27. Salabiaku v. France (1988), Application no. 10519/83, Section 28.
28. Law no. 8429 of 2 June 1992, Article 9, Section VII of the Law of Administrative Improbity
29. Conference of the States Parties to the United Nations Convention against Corruption, CAC/COSP/IRG/I/1/1/Add.18, էջ 3.
30. Anti-Corruption Reforms in Ukraine, round 3 Monitoring of the Istanbul Anti-Corruption Action Plan
31. Group of States against Corruption (GRECO), Fourth Evaluation Round: Corruption Prevention in Respect of Members of Parliament, Judges and Prosecutors. Evaluation Report, ‘The former Yugoslav Republic of Macedonia’ (Strasbourg: Council of Europe, 17 March 2014),

32. Group of States against Corruption (GRECO), Fourth Evaluation Round: Corruption Prevention in Respect of Members of Parliament, Judges and Prosecutors. evaluation report Romania, 2015
33. Guillermo Jorge, The Romanian Legal Framework on Illicit Enrichment, 2007,
34. Country review report of Slovak Republic. Review by Malta and Poland of the implementation by the Slovak Republic. “Criminalization and law enforcement”, “International cooperation” of the United Nations Convention against Corruption for the review cycle 2010-2015. UNODC
35. Financial Supervision of Public Officials

Հավելված

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ես՝ _____(պաշտոն, անուն, ազգանուն) սույնով հավաստում եմ, որ սույն հայտարարագրի ստորագրման օրվա դրությամբ չունեմ որևէ շահերի բախում: Շահերի բախում հասկացության տակ հասկանում եմ այնպիսի իրավիճակ, երբ ես հնարավորություն ունեմ ուղղակի կամ անուղղակի օգուտ քաղել երրորդ անձանցից, իմ պաշտոնից, աշխատանքի բերումով ինձ հայտնի դարձած տեղեկություններից, երրորդ անձանց (հաճախորդների) միջև ծագած վեճերից, չունեմ իմ անմիջական ենթակայության տակ աշխատող ինձ հետ ազգակցական կապ ունեցող աշխատող և կարող եմ անկողմնակալ կատարել իմ աշխատանքային պարտականությունները:

Այն դեպքում, եթե ինձ մոտ առաջանա շահերի բախում, ես այդ մասին պարտավոր եմ գրավոր տեղեկացնել վերադաս ղեկավարին:

ստորագրություն

ամսաթիվ

Ծանուցում

Սույն հայտարարագրի իմաստով ազգակցական կապի և ազգակցական կապի մեջ գտնվող աշխատողի տակ հասկանում ենք ծնողներին, եղբորը, քրոջը, տատիկին, պապիկին, որդուն, դստերը, թոռնիկին, թոռնուհուն, հորաքրոջը, մորաքրոջը, հորեղբորը, քեռուն, զարմիկին, զարմուհուն, ամուսնու կամ կնոջ ընտանիքի անդամներին, երեխաների ամուսիններին կամ կանանց և նրանց ընտանիքներին:

ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Ես՝ _____(պաշտոն, անուն, ազգանուն) հայտնում եմ, որ սույն հայտարարագրի ստորագրման օրվա դրությամբ իմ ազգական (նշել ազգակցական կապը), ընկեր _____(անուն, ազգանուն)

հանդիսանում է _____(նշել անվանումը) ընկերության
հիմնադիր, բաժնետեր:

ստորագրություն

ամսաթիվ